ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսական համակարգը 4

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ 18

Ֆինանսական համակարգի ցուցանիշներ 25

ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 31

ՀՀ միջազգային պահուստների վիճակը և կազմը 32

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիճակագրության վարչություն

Ա. Իգիթխանյան, Ա. Գագիկյան
Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը 2010 թվականին 34

Ա. Սողոյան, Ա. Ալեքսանյան
Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը 2010 թվականին 53

ՀՀ ֆինանսական համակարգը 2011 թվականի երկրորդ եռամսյակում

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԸ

30.06.2011 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր՝ 418 մասնաճյուղերով:

2011 թվականի երկրորդ եռամսյակում արձանագրվել է բանկային համակարգի ամփոփ ցուցանիշների աճ: Բանկերը բարձր ակտիվություն են ցուցաբերել վարկային շուկայում՝ նպաստելով ֆինանսական միջնորդության աճին:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

2011 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր կապիտալն ավելացել է 1.4 %-ով (4.6 մլրդ դրամով) և կազմել 339.7 մլրդ դրամ: Կանոնադրական կապիտալն ավելացել է 15.4 մլրդ դրամով: Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը ավելացել է 11.3 մլրդ դրամով, իսկ նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը նվազել է 24.8 մլրդ դրամով:

Կապիտալի համեմատ ակտիվների արագատեմպ աճի պայմաններում ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 0.9 տոկոսային կետով՝ կազմելով 19.3%:


Դիտարկվող ժամանակահատվածում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը նվազել է 1.3 տոկոսային կետով և կազմել 20.0%՝ պայմանավորված ընդհանուր նորմատիվային կապիտալի աճի նկատմամբ ռիսկով կշռված ակտիվների առաջանցիկ աճով՝ ի հաշիվ հաշվետու եռամսյակի ընթացքում բանկերի դրսևորած ակտիվ վարկային քաղաքականության:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր պարտավորությունները ավելացել են 7.4%-ով (97.7 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 419.6 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների 70.3 մլրդ դրամ և ֆիզիկական ու իրավաբանական անձանց ժամկետային և ցպահանջ պարտավորությունների 31.3 մլրդ դրամ աճով: Ընդհանուր պարտավորությունների աճ արձանագրվել է 16 բանկում, իսկ նվազում՝ 5 բանկում:

Պարտավորությունների կազմում հիմնականում նվազել են բանկերում թղթակցային հաշիվները՝ 61.4 %-ով կամ 4.5 մլրդ դրամով:

Առևտրային բանկերի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

30.06.2011 թ. դրությամբ առևտրային բանկերի ընդհանուր ավանդների մեծությունը կազմել է 748.6 մլրդ դրամ: Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներն ավելացել են 8.4%-ով կամ 36.3 մլրդ դրամով, իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդները նվազել են 1.7%-ով կամ 5.0 մլրդ դրամով:

Ըստ արժութային կառուցվածքի՝ դրամային ավանդները եռամսյակի ընթացքում ավելացել են 5.8%-ով կամ 12.2 մլրդ դրամով, իսկ արտարժութային ավանդները՝ 3.8%-ով կամ 19.2 մլրդ դրամով: Արդյունքում՝ դրամային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր ավանդներում աճել է 0.4 տոկոսային կետով և կազմել 29.8%:


Եռամսյակի ընթացքում ավելացել են այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների և բանկերի թղթակցային հաշիվների ու այլ պարտավորությունների (ներառյալ ԿԲ) տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 1.4 և 1 տոկոսային կետով: Փոխարենը նկատվել է իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորությունների տեսակարար կշռի նվազում 1.7 տոկոսային կետով:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Դիտարկվող ժամանակաշրջանում առևտրային բանկերի ընդհանուր ակտիվներն ավելացել են 6.2 %-ով (102.3 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 759.3 մլրդ դրամ: Եռամսյակի ընթացքում 16 բանկում արձանագրվել է ակտիվների աճ, իսկ 5 բանկում՝ նվազում:


Ակտիվների կազմում հիմնականում ավելացել են տնտեսությանը տրամադրված վարկերը (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը)՝ 7.5%-ով (75.9 մլրդ դրամով), բանկերի թղթակցային հաշիվները և այլ պահանջները բանկերի նկատմամբ՝ 19.4 %-ով (24.5 մլրդ դրամով):

Առևտրային բանկերի ակտիվների ծավալները




Առևտրային բանկերի ակտիվների կառուցվածքը

31.03.2011



30.06.2011



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխատակիցներին
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ


Երկրորդ եռամսյակի ընթացքում հիմնականում նվազել են ԿԲ-ում թղթակցային հաշիվները և այլ պահանջները՝ 2.5 %-ով (4.5 մլրդ դրամով):

Իրավաբանական անձանց վարկերն ավելացել են 8.7 %-ով (52.0 մլրդ դրամով), ֆիզիկական անձանց վարկերը՝ 7.8 %-ով (27.0 մլրդ դրամով), բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 10.1 %-ով (2.7 մլրդ դրամով), լիզինգն ու ֆակտորինգը նվազել է 12.7%-ով (5.8 մլրդ դրամով):


30.06.2011 թ. դրությամբ բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը (առանց լիզինգի և ֆակտորինգի) կազմել է 1 տրլն 48.2 մլրդ դրամ, որի 61.6%-ը բաժին է ընկել իրավաբանական անձանց, 35.6%-ը՝ ֆիզիկական անձանց, 2.8%-ը՝ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին (31.03.2011 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 61.4%, 35.8%, 2.8 %):

Առևտրային բանկերի ընդհանուր վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) հաշվետու եռամսյակում ավելացել են 9.2%-ով (101.4 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 209.2 մլրդ դրամ: Դրամով վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են 9.1%-ով և կազմել 488.4 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 9.2%-ով և կազմել 720.9 մլրդ դրամ: Արդյունքում՝ դրամային և արտարժութային վարկային ներդրումների տեսակարար կշիռները մնացել են անփոփոխ՝ համապատասխանաբար 40.4% և 59.6%:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ծավալները ըստ տնտեսության ճյուղերի



Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը նվազել են 2.0%-ով և կազմել 80.9 մլրդ դրամ: Ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ավելա-

ցել են 10.1 %-ով և կազմել են 1 տրլն 128.4 մլրդ դրամ, ընդ որում՝ վարկավորման ծավալներն ավելացել են տնտեսության բոլոր ճյուղերում: Վարկավորման առավել բարձր աճի տեմպ է արձանագրվել տրանսպորտի և կապի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտներում, համապատասխանաբար՝ 26.3%, 16.0 % և 11.0 %:

Ռեզիդենտների վարկային ներդրումների կառուցվածքում նվազել են արդյունաբերության և սպառողական վարկերի տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 1.1 և 0.7 տոկոսային կետով՝ կազմելով 20.5 % և 16.7 % :

Առևտրային բանկերի ստանդարտ ակտիվների տեսակարար կշիռը փոքր-ինչ ավելացել է՝ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 96.9%-ը: 30.06.2011թ. դրությամբ բանկային համակարգի «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 1.6 %-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.2%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.3%-ը (31.03.2011թ. դրությամբ՝ համապատասխանաբար 1.9 %, 0.8%, 0.6%):

Առևտրային բանկերի ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշը եռամսյակի ընթացքում նվազել է 2.1 տոկոսային կետով, իսկ ընթացիկ իրացվելիության ցուցանիշը՝ 5.3 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել 26.8% և 132.0%:


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

Հաշվետու տարվա առաջին կիսամյակի ընթացքում բանկային համակարգի զուտ շահույթը (շահույթը հարկումից հետո)՝ հաշվարկված ըստ վերահսկողական հաշվետվությունների, կազմել է 19.3 մլրդ դրամ[1], շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների՝ 2.2%, շահութաբերությունն ըստ կապիտալի (տարեկանացված)՝ 11.6 %: Շահույթով են աշխատել 19 բանկ, վնասով՝ 2 բանկ:

ՖՀՄՄ համաձայն՝ բանկային համակարգի զուտ շահույթը 2011 թվականի առաջին կիսամյակում կազմել է 20.5 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 2.4%, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 12.4 %:

Առևտրային բանկերն ապահովել են ընդհանուր 134.9 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ միաժամանակ իրականացնելով 110.7 մլրդ դրամի համախառն ծախսեր (ըստ ՀՀ ԿԲ ներկայացվող վերահսկողական հաշվետվությունների):

Առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի կառուցվածքը 30.06.2011 թ. դրությամբ



Տոկոսային եկամուտների գերակշիռ մասը՝ 78.5 %-ը, բաժին է ընկել տնտեսությանը տրամադրված վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտների կազմում մեծ տեսակարար կշիռներ

[1] *ԿԲ ներկայացվող հաշվետվությունների հիման վրա և ՖՀՄՄ համաձայն հաշվարկված շահույթի մեծությունների խոշոր տարբերության հիմնական պատճառը ստանդարտ ակտիվների գծով 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելն է, քանի որ բանկերը այդչափով ծախս են ճանաչում:*

են ունեցել ստացված միջնորդավճարներից եկամուտները և արտարժույթի առք ու վաճառքից եկամուտները, որոնք կազմել են ոչ տոկոսային եկամուտների համապատասխանաբար 45.6%-ը և 28.6%-ը:

Տոկոսային ծախսերի կազմում զգալի տեսակարար կշիռը՝ 46.5%-ը, բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 44.0%-ը, բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին:


Տարվա ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր զուտ մասհանումների[2] մեծությունը (4.8 մլրդ դրամ) կազմել է ընդհանուր ակտիվների 0.3%-ը:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ


30.06.2011թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել է 31 վարկային կազմակերպություն՝ 70 մասնաճյուղերով:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում ավելացել են 1.7%-ով (1.8 մլրդ դրամով) և կազմել 103.5 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 24, իսկ նվազում՝ 7 վարկային կազմակերպությունում:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ծավալները ըստ տնտեսության ճյուղերի



Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

[2] *Զուտ մասհանումները «Մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին» ծախսային և «Վերադարձ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից» եկամտային հոդվածների տարբերությունն է, և վերլուծական նպատակով հիմնականում օգտագործվում է զուտ մասհանումներ ցուցանիշը: Տարվա ընթացքում նույն ակտիվի դասի վատացմանը և լավացմանը զուգընթաց ավելանում են համապատասխանաբար «Մասհանումներ» և «Վերադարձ» հոդվածները, ըստ որի էլ բացատրվում են համախառն ծախսերում և համախառն եկամուտներում վերջիններիս զգալի տեսակարար կշիռները:*

2011 թվականի երկրորդ եռամսյակում վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի և լիզինգի ընդհանուր ծավալն ավելացել է 5.2 %-ով կամ 3.3 մլրդ դրամով և կազմել է 66.9 մլրդ դրամ: Դրամով տրամադրված վարկերի և լիզինգի ծավալն ավելացել է 6.9 %-ով (2.8 մլրդ դրամով), արտարժույթով տրամադրված վարկերի և լիզինգի ծավալը՝ 2.4%-ով (567.8 մլն դրամով): Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերն ավելացել են 7.0%-ով և կազմել 47.3 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերը մնացել են անփոփոխ՝ 12.8 մլրդ դրամ: Լիզինգի ծավալն ավելացել է 2.9 %-ով՝ կիսամյակի վերջին կազմելով 4.7 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալն ավելացել է 6.0 %-ով (5.3 մլրդ դրամով)՝ կազմելով 93.9 մլրդ դրամ: Վարկային ներդրումների կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն ավելացել է 0.4 տոկոսային կետով և կազմել 96.8 %: 30.06.2011թ. դրությամբ վարկային կազմակերպությունների «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 1.9 %-ը, ոչ ստանդարտ դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.7%-ը, կասկածելի դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.6%-ը (31.03.2011թ. դրությամբ՝ համապատասխանաբար՝ 2.4%, 0.6% և 0.6%):

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը նվազել է 3.4 %-ով (1.4 մլրդ դրամով) և կազմել 40.0 մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալն ավելացել է 19.2 %-ով (5.4 մլրդ դրամով)՝ պայմանավորված կանոնադրական հիմնադրամի համալրմամբ:

30.06.2011թ. դրությամբ վարկային կազմակերպությունների զուտ շահույթը (շահույթը հարկումից հետո)՝ հաշվարկված վերահսկողական հաշվետվությունների հիման վրա, կազմել է 1.2 մլրդ դրամ: Տարեսկզբից շահույթով է աշխատել 26, իսկ վնասով՝ 5 վարկային կազմակերպություն:

Ընդհանուր պարտավորություններն ավելացել են 5.2 %-ով (3.2 մլրդ դրամով) և կազմել 63.5 մլրդ դրամ՝ պայմանավորված հիմնականում այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների 15.1% (2.0 մլրդ դրամ) և իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունների 2.8% (448 մլն դրամ) աճով:

Վարկային կազմակերպությունների պարտավորությունների կառուցվածքում 2 տոկոսային կետով ավելացել է այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռը, փոխարենը նվազել են բանկերի նկատմամբ պարտավորությունները և իրավաբանական անձանց ժամկետային պարտավորությունները՝ համապատասխանաբար 0.8 և 0.6 տոկոսային կետով:

Տեղեկանք


2011 թվականի երկրորդ եռամսյակի վերջին ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքի վերաբերյալ

Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[*] 2011 թվականի երկրորդ եռամսյակի վերջին կազմել են 705.0 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 619.5 մլն դոլարի փոխարեն: Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 469.0 մլն դոլարի վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 385.9 մլն դոլարի հիմնական գումարի մարումներ[**]:

2011 թվականի երկրորդ եռամսյակի վերջին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Ռուսաստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է՝ 13.6% (նախորդ եռամսյակում՝ 12.6 %), Լյուքսեմբուրգը՝ 12.7 % (նախորդ եռամսյակում՝ 12.8%), Գերմանիան՝ 7.6% (նախորդ եռամսյակում՝ 7.1 %), Ֆրանսիան՝ 6.0% (նախորդ եռամսյակում՝ 6.9 %),Նիդեռլանդները՝ 5.7% (նախորդ եռամսյակում՝ 7.1 %): Վարկերի մոտ 30.5%-ը տրվել է միջազգային կազմակերպությունների կողմից:

2011 թվականի երկրորդ եռամսյակի վերջին ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի վերջի համեմատ նվազել է և կազմել 5.2 % (նախորդ եռամսյակի վերջի 5.4 %-ի փոխարեն): Արտաքին վարկերի մոտ 59%-ը լողացող (LIBOR, EURIBOR, ՊՊ) տոկոսադրույքով է: Վարկերի միջին ժամկետայնությունը 4.4 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը մի փոքր նվազել է և կազմել ներգրավված վարկերի 10.4 %-ը:

ՀՀ առևտրային բանկերի մասնավոր պարտքը 2004 - 2011 թթ.



** Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:*

*** Նախորդ ժամանակահատվածի վերջի և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում զուտ ներգրավված միջոցների գումարը տարբերվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի փաստացի ցուցանիշից, քանի որ ներգրաված միջոցներն արտահայտված են տարբեր արժույթներով, ինչի հետևանքով դրանք դոլարային համարժեքի վերածելիս պարունակում են փոխարժեքի հաշվին վերագնահատումները:*

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

30.06.2011թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել են 9 ապահովագրական ընկերություններ:

Հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովագրական ընկերությունների ակտիվները նվազել են 3.3%-ով՝ 30.06.2011թ. դրությամբ կազմելով 30.9 մլրդ դրամ, պարտավորությունները նվազել են 8.7%-ով՝ կազմելով 15.4 մլրդ դրամ, ընդհանուր կապիտալն ավելացել է 2.7%-ով՝ կազմելով 15.5 մլրդ դրամ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների կազմում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմել ավանդները բանկերում (49.8% տեսակարար կշիռ), արժեթղթերում ներդրումները (10.0% տեսակարար կշիռ) և ուղղակի ապահովագրության գծով ապահովադիրներից ստացվելիք գումարները (9.3% տեսակարար կշիռ):

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների կազմում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմել չվաստակած ապահովագրավճարների պահուստը (60.7% տեսակարար կշիռ), պահանջների պահուստները (12.1% տեսակարար կշիռ) և վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարները (7.9% տեսակարար կշիռ):

30.06.2011թ. դրությամբ ապահովագրական ընկերությունների շահույթը կազմել է 1.6 մլրդ դրամ:

ՖՀՄՍ համաձայն՝ ապահովագրական ընկերությունները 2011 թվականի առաջին կիսամյակում աշխատել են 1.6 մլրդ դրամ շահույթով:

Հաշվեգրված ապահովագրավճարները կազմել են 15.4 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողին փոխանցվող ապահովագրավճարները՝ 1.2 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 7.6%-ը:

Հաշվեգրված ապահովագրական հատուցումները կազմել են 2.9 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողներից ստացվող ապահովագրական հատուցումների գումարները՝ 365.0 մլն դրամ կամ ապահովագրական հատուցումների 12.6%-ը:


30.06.2011թ. դրությամբ ապահովագրական ընկերություններն ունեցել են 377.9 հազար գործող ապահովագրության պայմանագիր, որոնց ապահովագրական գումարների մեծությունը կազմել է 5.7 տրլն դրամ: Ապահովագրական գումարներից վերաապահովագրողներին փոխանցված ռիսկերի վերաապահովագրական գումարների մեծությունը կազմել է 1.6 տրլն դրամ կամ ապահովագրական գումարների 28.4%-ը:

2011 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություններ մատուցող 21 բանկ և 8 ներդրումային ընկերություն: Ներդրումային ծառայություն մատուցող ընկերություններից յոթը կարող են իրենց կամ հաճախորդի անունից և իրենց կամ հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել, վեցը՝ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել և հաղորդել, վեցը՝ կարող են նաև արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն և հինգը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում:

30.06.2011թ. դրությամբ ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվները կազմել են 22.5 մլրդ դրամ. նախորդ եռամսյակի համեմատ ավելացել են 21%-ով: Ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 8%-ով՝ կազմելով 3.8 մլրդ դրամ:

2011 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 3%-ով՝ կազմելով 93.4 մլրդ դրամ: Եռամսյակի ընթացքում կորպորատիվ պարտատոմսերով իրականացված գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է ավելի քան չորս անգամ և կազմել 1.1 մլրդ դրամ: Բաժնետոմսերով առուվաճառքի գործառնությունների ծավալը ավելացել է 104%-ով և 30.06.2011թ. դրությամբ կազմել է 6.5 մլրդ դրամ: Պետական պարտատոմսերով առուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 2%-ով և կազմել է 85.7 մլրդ դրամ: 2011թ. երկրորդ եռամսյակի արդյունքներով՝ ՀՀ արժեթղթերի շուկայի շրջանառության մեջ գերակշռել են պետական պարտատոմսերով գործառնությունները, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր շրջանառության մեջ կազմել է 91.8%: Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնետոմսերով իրականացված գործառնությունների տեսակարար կշիռներն ընդհանուր շրջանառության մեջ կազմել են համապատասխանաբար 1.2% և 7.0%:

Ներդրումային ընկերությունների կողմից 2011 թ. առաջին կիսամյակում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալները



Պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների մեջ գերակշռել են պետական միջին ժամկետայնության պարտատոմսերով իրականացված գործառնությունները (կազմել են պետական արժեթղթերով գործառնությունների 49.4%-ը): Պետական կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերով գործառնությունների տեսակարար կշիռները կազմել են ընդհանուր շրջանառության համապատասխանաբար 14.8%-ը և 35.8%-ը:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները կազմել են ներդրումային գործունեության շրջանակներում կատարված առուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 1%-ը:

Կարգավորվող շուկայում իրականացված գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 1%-ով և կազմել 4.1 մլրդ դրամ, ընդ որում՝ շրջանառության 87.3%-ը կազմել են ռեպո գործառնությունները, 2.2%-ը՝ կորպորատիվ պարտատոմսերի, 8.1%-ը՝ պետական պարտատոմսերի և 2.4%-ը՝ բաժնետոմսերի առուվաճառքի գործառնությունները:

Ներդրումային գործառնությունների շրջանակներում իրականացված գործառնությունների մեջ 90%-ը կազմել են ներդրումային ծառայություններ մատուցող առևտրային բանկերի կողմից իրականաց-

ված գործառնությունները, 10%-ը՝ ներդրումային ընկերությունների կողմից իրականացված գործառնությունները:

Ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (ներառյալ կարգավորվող շուկայում իրականացված ռեպո գործառնությունները) նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 81.3%-ով և կազմել 775.8 մլրդ դրամ, որից 302.6 մլրդ դրամը կազմել են երկարաձգված գործարքները:

30.06.2011թ. դրությամբ հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը կազմել է 2.0 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի վերջի համեմատ նվազելով 0.1%-ով:

2011թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 1569 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը՝ 93756 մարդ: ՀՀ արժեթղթերի շուկայում, բացի ՀԿԴ-ից, արժեթղթերի թողարկողներին ռեեստրի վարման ծառայություն են մատուցում նաև ներդրումային ծառայություն մատուցող երկու անձինք, որոնք իրականացնում են 308 ընկերությունների և 29078 սեփականատեր անձանց ռեեստրի վարումը:

30.06.2011թ. դրությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված են եղել 15 թողարկողների 18 արժեթղթեր, այդ թվում՝ 12 բաժնետոմս (11 թողարկողի) և 6 պարտատոմս (4 թողարկողի): Թողարկողներից 4-ը բանկ են: Ընդ որում՝ բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմել է 49.8 մլրդ դրամ, իսկ պարտատոմսերի ծավալը՝ 4.1 մլրդ դրամ: Թողարկված բաժնային արժեթղթերի 26%-ը բաժին է ընկել առևտրային բանկերին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Ազգային ժողովը 2011 թվականի հունիսի 23-ին ընդունել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված հետևյալ ՀՀ օրենքները.

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքները:

Օրենքների նպատակն է լուծել գրավի առարկա գույքի բռնագանձման ժամանակ առաջացող հարկային և իրավական խնդիրները:

Մինչ այդ, գործող հարկային օրենսդրության շրջանակներում գրավադրված գույքը բանկին ի սեփականություն վերցնելը՝ հետագա իրացման նպատակով, դիտվում էր իբրև գրավատուի կողմից այդ գույքի իրացում, որն առաջացնում էր եկամտահարկի վճարման պարտավորություն:

Բանկը, հանդես գալով որպես հարկային գործակալ, ստիպված էր լինում իր միջոցների հաշվին վճարել եկամտահարկը: Բացի այդ, հստակ չէր սահմանված, թե բռնագանձված գույքի արժեքի և գրավով ապահովված պարտավորության միջև եղած տարբերությունը երբ է ենթակա վերադարձման գրավատուին:

Օրենքով սահմանվում է գրավ դրված գույքի արտադատական կարգով բռնագանձման և իրացման արդյունքում ֆիզիկական անձի ստացած եկամուտների հարկման նոր մեխանիզմ:

Օրենքով գրավատուի կողմից գույքն օտարելուց ստացված եկամուտ է համարվում գրավ դրված գույքի իրացման գնի և գրավով ապահովված պարտավորության դրական տարբերությունը:

Նախատեսվել է ***«գույքի իրացման գնի և իրացման (հետևաբար նաև ավել գումարի վերադարձման) պահի»*** որոշման 3 հնարավոր տարբերակ.

1) ***Տարբերակ 1*** - Գրավադրված գույքը բանկին ի սեփականություն անցնելու օրվանից ***6 ամսվա ընթացքում բանկի կողմից օտարվում է*** երրորդ անձի: Այս դեպքում գույքի իրացման գին և իրացման պահ է համարվում բանկի կողմից գույքի *օտարման գինը և օտարման օրը*, իսկ այն դեպքում, երբ օտարման գինը ողջամիտ չհամարվող չափով ցածր է այդ գույքի շուկայական արժեքից, ապա որպես գույքի իրացման գին է համարվում այդ *գույքի շուկայական արժեքը, բացառությամբ, եթե այդ գույքը կրկին վաճառվել է իր նախկին սեփականատիրոջը կամ նրա իրավահաջորդին*:
2) ***Տարբերակ 2*** - Բանկը ***չի օտարել*** գույքը իրեն ի սեփականություն անցնելու օրվանից 6 ամսվա ընթացքում: Այս դեպքում գույքի իրացման գին և իրացման պահ է համարվում 6-ամսյա ժամկետի վերջին օրը և այդ օրվա դրությամբ *գույքի շուկայական արժեքը*:
3) ***Տարբերակ 3*** – Բանկի և գրավատուի միջև ***նախապես կնքված գրավոր պայմանագրով***: Այս դեպքում անձինք կարող են պայմանավորվել, որ գույքը հետագայում բանկին ի սեփականու-

թյուն անցնելու դեպքում օտարելու գին և օտարելու պահ է համարվելու բանկին ի սեփականություն անցնելու օրը և այդ օրվա դրությամբ որոշվող շուկայական գինը:

Հիշյալ 6-ամսյա ժամկետի հաշվարկի մեջ չի մտնում այն ժամանակահատվածը, երբ գրավատուի կամ նրա իրավահաջորդի մասնակցությամբ քաղաքացիական, քրեական, սնանկության կամ վարչական գործի շրջանակներում բանկին ի սեփականություն անցած համապատասխան գույքի վրա արգելանք է դրված եղել:

«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները:

Սահմանվել է, որ.

- Գրավով, երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտատերն իրավունք ունի ապահովված պահանջների բավարարումը ստանալու մորատորիումի գործողությունից անկախ: Դա նշանակում է, որ ֆինանսական կազմակերպությունը կամ ցանկացած այլ անձ իրավունք ունի առանց սպասելու սնանկության գործընթացների ավարտին, ստանալու իր պահանջների բավարարում գրավադրված գույքից, սնանկության գործընթացում չգտնվող երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցներից:
- Միևնույն ժամանակ, սնանկության գործընթացում գտնվող պարտապանի մյուս պարտատերերի շահերի պաշտպանության նպատակով սահմանվել է 2 հնարավոր տարբերակ՝
  - եթե անձը օգտվում է գրավադրված գույքից վաղաժամկետ բավարարում ստանալու իրավունքից (առանց սպասելու մորատորիումի գործողության ավարտին), ապա նա իրավունք չունի (այդ թվում՝ հետագայում) գրավի առարկայի արժեքը գերազանցող պահանջի բավարարում ստանալու պարտապանի այլ գույքից.
  - եթե պարտատերը չի օգտվում վերը նշված իր իրավունքից, ապա նա իր պահանջների բավարարումը ստանում է մորատորիումից հետո, բայց ինչպես գրավադրված, այնպես էլ պարտապանի այլ գույքից:

ՀՀ Ազգային ժողովը 2011 թվականի մայիսի 25-ին ընդունել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված՝

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները:

Նախագծերի ներկայացումը պայմանավորված էր Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունվարի 21-ի թիվ 97-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1768-Ն որոշմամբ:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխություններով նախատեսվել է, որ հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորների կողմից իրենց հաճախորդների վերաբերյալ վարկային տեղեկատվության (հեռախոսային խոսակցության արդյունքում ձևավորված պարտքերը) տրամադրումը վարկային բյուրոյին չի համարվում անձի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում:

Փոփոխության արդյունքում հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորներն իրավունք կունենան իրենց հաճախորդների պարտքերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու վարկային բյուրոներին: Սակայն այդ տեղեկատվության տրամադրումը չի հանդիսանում վարկային բյուրոյին պարտադիր տրամադրման ենթակա տեղեկատվություն: Այսինքն՝ այդ տեղեկատվության տրամադրումը հնարավոր է վարկային բյուրոյի և հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորների միջև ձեռք բերված համաձայնության արդյունքում՝ հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորների կողմից իրենց հաճախորդներին նախապես տեղեկացնելով, որ հնարավոր է՝ նրանց վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվի վարկային բյուրոյին:

«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի լրացումները պայմանավորված էին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրոների կողմից ամբողջական վարկային զեկույց պատրաստելու գործընթացում օրենսդրական խնդիրների վերացման, ինչպես նաև վարկատու կազմակերպություններում վարկային պատմություն չունեցող անձանց համար վարկային տեղեկատվության ձևավորման և զարգացման անհրաժեշտու-

թյամբ: Փոփոխությունների ընդունումից հետո վարկային բյուրոն պարտավոր է վարկային զեկույցում ընդգրկել տեղեկատվություն այն մասին, թե որ տիպի սուբյեկտից ստացված տվյալների արդյունքում է ձևավորվել վարկային բյուրոյում առկա տեղեկությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսուհետ վարկային բյուրոն հավաքագրելու է ոչ միայն ֆինանսական կազմակերպությունների, այլ նաև այլ սուբյեկտների հաճախորդների վերաբերյալ տեղեկատվություն: Այսինքն՝ վարկային զեկույցում վարկային բյուրոն պետք է նշի, որ տվյալ տեղեկատվությունը ձևավորվել է բանկերից, վարկային կազմակերպություններից կամ, օրինակ՝ կոմունալ ծառայություններ մատուցող սուբյեկտներից ստացված տեղեկատվության հիման վրա: Իսկ անհրաժեշտության դեպքում վարկային զեկույցում ներառվող տվյալների ցանկը կսահմանի ՀՀ կենտրոնական բանկը՝ ապահովելու համար բոլոր բյուրոների կողմից ներկայացվող վարկային զեկույցների միատեսակ ձևն ու բովանդակությունը:

Բանկային համակարգի կարգավորման դաշտում 2011 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում և «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ում կատարվել է փոփոխություն, որով ղեկավարների և աշխատակիցների գրանցման համար սահմանված ստանդարտ միջնորդագրի ձևում ներառվել են 2011 թվականի հունվարի 9-ին ուժի մեջ մտած «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով գրանցման ենթակա ներդրումային ֆոնդերի կառավարիչների և պահառուների ղեկավարները և աշխատակիցները:

   Փոփոխության արդյունքում հնարավոր կլինի ապահովել «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի դրույթի պահանջը, ինչպես նաև ֆինանսական համակարգի՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցման ենթակա բոլոր ղեկավարների և աշխատակիցների համար մեկ միասնական միջնորդագրի միջոցով գրանցման ընթացակարգը:
2. «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում և «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում կատարված փոփոխություններով սահմանվել է, որ ֆինանսական լիզինգով տրամադրելու նպատակով ձեռք բերված կամ ֆինանսական լիզինգի պայմանագրի լուծման կամ ավարտի դեպքում բանկի (վարկային կազմակերպության) սեփականությունը դարձած նյութական ակտիվները բանկի (վարկային կազմակերպության) հիմնական կապիտալից նվազեցվում են բանկի (վարկային կազմակերպության) հաշվեկշռում գրանցվելու օրվանից մեկ տարի անց՝ նախկին 6 ամսվա փոխարեն:

   Փոփոխության նպատակն է կարգավորել բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից մատուցվող լիզինգային ծառայությունների հետ կապված խնդիրները, երբ լիզինգային պայմանագիրը լուծվում է ժամանակից շուտ և բանկը (վարկային կազմակերպությունը) ստիպված է նոր լիզինգառու փնտրել:
3. Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պետական գրանցում ստացած կազմակերպությունների պետական գրանցման մասին տեղեկությունները Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրելու կարգը», որի նպատակն է «մեկ պատուհան» սկզբունքի իրականացումը, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տեղեկատվության տրամադրման գործընթացի կարգավորումը: Կարգի հիմնական դրույթներն են.
   - Պետական եկամուտների կոմիտեից կազմակերպությունների ՀՎՀՀ-ն ստանալու համար Կենտրոնական բանկը Պետական եկամուտների կոմիտեին առցանց ռեժիմով տրամադրում է հետևյալ տեղեկությունները՝ կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական տեսակը, գրանցման վկայականի համարը, գրանցման ամսաթիվը, գտնվելու վայրը, գործունեության տեսակները, գործունեության իրականացման վայրի հասցեն(երը), տնօրենի և գլխա-

վոր հաշվապահի անձնագրային տվյալները և հեռախոսահամարը, կազմակերպության ստեղծման եղանակը (հիմնադրման միջոցով կամ վերակազմակերպման միջոցով):

- Նշված տեղեկությունները ստանալուց հետո Պետական եկամուտների կոմիտեն ԿԲ-ին առցանց ռեժիմով տրամադրում է կազմակերպության ՀՎՀՀ-ն և հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը:
- ԿԲ կողմից Պետական եկամուտների կոմիտեին տրամադրվում են կազմակերպությունների գործունեության դադարման, լուծարման թույլտվություն տալու վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև պաշտոնական ինտերնետային կայքի հասցեն:

Ապահովագրական շուկայի կարգավորման դաշտի բարեփոխումների նպատակով 2011 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 365-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՌԱՄԵԼՍ) հաշվարկման մեթոդաբանությունը» կանոնակարգ 3/08-ում, որոնց հիմնական նպատակը կանոնակարգի և դրա հետ անմիջականորեն առնչվող այլ իրավական ակտերի միջև համապատասխանության ապահովումն է՝ նպաստելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերությունների «ՔԱՌԱՄԵԼՍ» գնահատականների արդյունավետ հաշվարկմանը:

Արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտի բարեփոխումների նպատակով 2011 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ընդունվել և փոփոխություններ ու լրացումներ են կատարվել հետևյալ իրավական ակտերում.

1. ՀՀ ԿԲ խորհրդի 02.05.2011թ. թիվ 122-Ն, 124-Ն, 125-Ն որոշումներով լրացումներ են կատարվել.
   - «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում,
   - «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01- ում:
   - «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ում:

     Նշված կանոնակարգերի լրացումները պայմանավորվել են 2011 թվականի հունվարի 9-ին ուժի մեջ մտած «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, որով նախատեսվել են Կենտրոնական բանկում գրանցման ենթակա նոր ղեկավարներ և աշխատակիցներ (մասնավորապես՝ ներդրումային ֆոնդերի կառավարիչների և պահառուների ղեկավարներ և աշխատակիցներ): Ուստի, կանոնակարգերում կատարվել են լրացումներ, որոնց համաձայն՝ ֆինանսական կազմակերպությունների՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցման ենթակա բոլոր ղեկավարների և աշխատակիցների գրանցման համար սահմանված ստանդարտ միջնորդագրի ձևում ներառվել են նաև այս ղեկավարները և աշխատակիցները՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցվող բոլոր ղեկավարների և աշխատակիցների համար մեկ միասնական միջնորդագրի միջոցով գրանցման ընթացակարգ ապահովելու նպատակով:
2. ՀՀ ԿԲ խորհրդի 02.05.2011թ. թիվ 116-Ն որոշմամբ հաստատվել է «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից

մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը: Կանոնակարգի մշակումը նպատակ ունի «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքներով նախատեսված նոր ֆինանսական ինստիտուտների՝ ներդրումային ֆոնդերի կառավարիչների համար սահմանել մուտքի պահանջներ, մասնավորապես՝ կանոնակարգով սահմանվել են կառավարիչների գրանցումն ու լիցենզավորումը, կենսաթոշակային ֆոնդի կառավարման, ինչպես նաև «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ներդրումային ծառայությունների մատուցման թույլտվության տրամադրումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես կառավարիչ, կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի և դրանում կատարվող փոփոխությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, ինչպես նաև կառավարչի տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ պահանջները:

3. ՀՀ ԿԲ խորհրդի 02.05.2011թ. թիվ 119-Ն որոշմամբ հաստատվել է «Ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը (ներառյալ՝ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր ներդրումային ֆոնդում կառավարչի պարտադիր մասնակցության նվազագույն չափը), տնտեսական նորմատիվների խախտումների՝ ներդրումային ֆոնդի կառավարչի լիցենզիան (թույլտվությունը) ուժը կորցրած ճանաչելու հիմք համարվող նվազագույն չափը» կանոնակարգ 10/02-ը: Կանոնակարգով սահմանվել են ներդրումային ֆոնդի կառավարիչների կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափերը, կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդում կառավարչի պարտադիր մասնակցության նվազագույն չափը, տնտեսական նորմատիվների (այդ թվում՝ կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդում կառավարչի պարտադիր մասնակցության նվազագույն չափի) խախտումների նվազագույն չափը, որի դեպքում կառավարչի՝ ֆոնդի կառավարման գործունեության լիցենզիան կամ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ծառայությունների մատուցման թույլտվությունը կարող է ուժը կորցրած ճանաչվել: Նշված դրույթների սահմանումը նպատակ ունի բարձրացնելու ներդրումային ֆոնդի կառավարիչների ֆինանսական կայունությունը, ներդրումային ֆոնդերի կառավարման արդյունավետությունը, ինչպես նաև ներդրողների վստահությունը ներդրումային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ և, ընդհանուր առմամբ, նպաստելու ֆինանսական համակարգի կայունությանը:
4. ՀՀ ԿԲ խորհրդի 02.05.2011թ. թիվ 115-Ն որոշմամբ հաստատվել է «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ը: Կանոնակարգով սահմանվել են ներդրումային ֆոնդերի կառավարիչների ղեկավարների և կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց, ինչպես նաև ֆոնդի պահառուների՝ ֆոնդի ակտիվների պահառության համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարների և պահառուի աշխատակիցների որակավորման և գրանցման ընթացակարգերը, որոնց նպատակն է ֆոնդի կառավարիչների և պահառուների համար ապահովել գրագետ ղեկավարներ և աշխատակիցներ:
5. ՀՀ ԿԲ խորհրդի 02.05.2011թ. թիվ 117-Ն որոշմամբ հաստատվել է «Ներդրումային ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցումը, օտարերկրյա ներդրումային ֆոնդի արժեթղթերը Հայաստանի Հանրապետությունում վաճառելու համար նախնական թույլտվություն տրամադրելու կարգն ու պայմանները» կանոնակարգ 10/11-ը: Կանոնակարգի մշակումը նպատակ ունի «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքներով նախատեսված ներդրումային ֆոնդերի ստեղծման համար ապահովել մուտքի պահանջներ, ուստի, այս առումով կանոնակարգով սահմանվել են կորպորատիվ ֆոնդի և պայմանագրային ֆոնդի կանոնների գրանցման ընթացակարգերը, գրանցման համար ներկայացվող փաստաթղթերը, որակավորված ներդրողների ֆոնդերի և ոչ հրապարակային ֆոնդերի (ֆոնդերի կանոնների) գրանցման, փոփոխությունների գրանցման, ինչպես նաև օտարերկրյա հրապարակային ֆոնդի արժեթղթերը ՀՀ-ում վաճառելու համար նախնական թույլտվության տրամադրման ընթացակարգերը:
6. ՀՀ ԿԲ խորհրդի 02.05.2011թ. թիվ 118-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի

ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ում, մասնավորապես՝ կանոնակարգում կատարվել են հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

- Հաշվի առնելով, որ «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով նախատեսվել են Կենտրոնական բանկում գրանցման ենթակա նոր ղեկավարներ և աշխատակիցներ (ներդրումային ֆոնդերի կառավարիչներ և պահառուների ղեկավարներ և աշխատակիցներ)՝ ֆինանսական կազմակերպությունների՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցման ենթակա բոլոր ղեկավարների և աշխատակիցների գրանցման համար սահմանված ստանդարտ միջնորդագրի ձևում ներառվել են նաև այս ղեկավարները և աշխատակիցները՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցվող բոլոր ղեկավարների և աշխատակիցների համար մեկ միասնական միջնորդագրի միջոցով գրանցման ընթացակարգ ապահովելու նպատակով:
- Հաշվի առնելով գրանցման ենթակա ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց՝ ներկա փուլում գրանցման աննպատակահարմարությունը՝ գրանցվող ղեկավարների և աշխատակիցների կազմից հանվել են ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձինք: Նշված փոփոխության նպատակն է ապահովել ՀՀ արժեթղթերի շուկայի արդիական խնդիրներին համահունչ Fit&Proper-ի կանոնների առկայություն՝ միաժամանակ վերացնելով գրանցման ընթացակարգում առկա ծանրաբեռնող դրույթները:

7. ՀՀ ԿԲ խորհրդի 24.05.2011թ. թիվ 156-Ն որոշմամբ հաստատվել է «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջները, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման և փայերի մարման կարգը» կանոնակարգ 10/09-ը: Կանոնակարգով սահմանվել են պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջները, ինչպես նաև պարտադիր կենսաթոշակային ֆոնդում տվյալ ֆոնդի կառավարչի կողմից փայերի ձեռքբերման և մարման կարգը, որի նպատակն է բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման և պարտադիր կենսաթոշակային ֆոնդում տվյալ ֆոնդի կառավարչի կողմից փայերի ձեռքբերման ու փայերի մարման համար ապահովել միասնական ընթացակարգեր:
8. ՀՀ ԿԲ խորհրդի 21.06.2011թ. թիվ 171-Ն որոշմամբ հաստատվել է «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումի ձևը և դրա ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը: Կանոնակարգով սահմանվել են ՀՀ-ում պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին պարտադիր սկզբունքով մասնակցող, ինչպես նաև կամավոր միանալու իրավունք ունեցող ֆիզիկական անձանց կողմից ինտերնետային կայքի կամ հաշվի օպերատորի միջոցով մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացվող կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումի ձևը և դրա ներկայացման կարգը, որի նպատակն է մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացվող դիմումների միասնական ձևերի և դրանց ներկայացման կարգի սահմանման միջոցով ապահովել ներկայացման ընթացակարգի պարզությունը, ինչպես նաև դիմումների լրացման ուղեցույցների միջոցով խուսափել դիմումների երկիմաստ բովանդակությունից:


Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 2011 թ. երկրորդ եռամսյակում

2011 թ. երկրորդ եռամսյակում ՀՀ տարածքում բանկային համակարգով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 5546 մլրդ դրամ (քանակը՝ 2885487), ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 4583 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 958111: 2011 թ. երկրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 51%-ով (1541 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 22%-ով (174576-ով): ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված փոխանցումների ծավալը 2011 թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 16%-ով (636 մլրդ դրամով), իսկ քանակը ավելացել է 163901-ով (20 %-ով):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը (առանց բորսայական գործառնությունների) կազմել է մոտ 72 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 15392: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը 2010 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 24 մլրդ դրամով (քանակը ավելացել է 2728-ով):

2011 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումների տեսակարար կշիռը կազմել է ընդհանուր վճարումների ծավալի 26.94%-ը, քանակի 51.42%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ նվազել է 15.3%-ով (49 մլրդ դրամով), իսկ քանակն ավելացել է 100323-ով (1.3%-ով):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)



2011 թ. երկրորդ եռամսյակում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 182 մլրդ դրամի 3591294 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 14.6 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 2.5 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 0.7 մլրդ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 1.8 մլրդ դրամ): Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 821280, որը 2011 թ. առաջին եռամսյակի վերջի համեմատությամբ ավելացել է 5.6%-ով (43944 քարտով): Հաշվետու եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է քարտային գործառնությունների մոտ

8%-ը: Ընդհանուր առմամբ, քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 55%-ով (5.2 մլրդ դրամով):

2011 թ. երկրորդ եռամսյակում առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական ստացումները նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել են 19%-ով և կազմել 161 մլրդ դրամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը գրեթե պահպանվել է նույն մակարդակում՝ 64 մլրդ դրամ: Արդյունքում՝ ֆիզիկական անձանց ուղղված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 97 մլրդ դրամ, որը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 26 մլրդ դրամով:


Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների միջոցով, ինչպես նաև առևտրային բանկերի հետ համագործակցության արդյունքում մատուցված ծառայությունների դիմաց հավաքագրված միջոցները կազմել են 9.7 մլրդ դրամ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2011 թ. երկրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով[3] կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 39%-ը, քանակի 96%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ էլեկտրոնային վճարումների ծավալը ավելացել է 1%-ով (17 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 22%-ով (173693-ով): Առևտրային բանկերի կողմից իրականացված ընդհանուր վճարումներում էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված փոխանցումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի մոտ 65%-ը (2010 թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 3%-ով), իսկ քանակի՝ մոտ 99.7%-ը:

էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2010 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 2714-ով՝ կազմելով 14812, իսկ ծավալն ավելացել է 0.3 մլրդ դրամով՝ կազմելով 27.7 մլրդ դրամ:

էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները 2008 – 2010 թթ., ինչպես նաև 2010 -2011 թթ. եռամսյակների ընթացքում (առանց բորսայական փոխանցումների)




էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.4 մլն դրամով և կազմել է 1.9 մլն դրամ:

Բացի այդ, էլեկտրոնային վճարումների համակարգով բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումները 2011 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում կազմել են 11283 մլրդ դրամ, որտեղ միջին օրական փոխանցումները նվազել են 21 մլրդ դրամով և կազմել 176 մլրդ դրամ, իսկ առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը կազմել է 1.9 մլրդ դրամ, որը նվազել է 70 մլն դրամով:

[3] էլեկտրոնային վճարումների համակարգում բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումները չեն ընդգրկվում և դիտարկվում են առանձին:

Էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված միջին օրական վճարումներում բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումները



Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են վճարումների քանակի 0.01%-ը, ծավալի 0.165%-ը (96 փոխանցում՝ 21.5 մլրդ դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.008%-ը, ծավալի 0.164%-ը (73 փոխանցում՝ 21.4 մլրդ դրամ ծավալով):

ՀԱՄԱԽՍՈՒՌՆ ԹՂԹԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2011 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված վճարումների ծավալի 55.35%-ը, քանակի 3.67%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծավալն ավելացել է 2.2-անգամ, իսկ քանակը՝ 1.6%-ով):

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով*		Բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումներ	
	էլեկտրոնային*		Թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2010										
I եռ.	1262858	640985	688950	33795	148297	1046	2100105	675826	9496297	4963
տեսակարար կշիռը վճարումներում (%)	60.13	94.84	32.81	5.00	7.06	0.15	100	100		
II եռ.	1755508	774247	1179761	35556	106883	732	3042152	810535	12614414	6364
տեսակարար կշիռը վճարումներում (%)	57.71	95.52	38.78	4.39	3.51	0.09	100	100		
III եռ.	2240052	821259	1565602	38665	163558	1005	3969211	860929	9374108	5942
տեսակարար կշիռը վճարումներում (%)	56.44	95.39	39.44	4.49	4.12	0.12	100	100		
IV եռ.	2265156	968452	1971135	42412	186706	956	4422997	1011820	10060316	5932
տեսակարար կշիռը վճարումներում (%)	51.213	95.71	44.57	4.19	4.22	0.09	100	100		
Ընդամենը	7523573	3204943	5405448	150428	605444	3739	13534465	3359110	41545135	23201
տեսակարար կշիռը վճարումներում (%)	55.59	95.41	39.94	4.48	4.47	0.11	100	100		

2011										
I եռ.	1782526	784220	1960157	36116	203913	874	3946595	821210	9553069	5432
տեսակարար կշիռը վճարումներում (%)	45.17	95.50	49.67	4.40	5.17	0.11	100	100		
II եռ.	1772684	947940	2536593	36134	273546	1037	4582823	985111	11282630	5901
տեսակարար կշիռը վճարումներում (%)	38.68	96.23	55.35	3.67	5.97	0.11	100	100		

** Առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների:*

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 565 փոխանցում՝ 39 մլրդ դրամ ծավալով (2010 թ. երկրորդ եռամսյակի համեմատ փոխանցումների միջին օրական ծավալը ավելացել է 21 մլրդ դրամով), իսկ այս եղանակով մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 70 մլն դրամ, որն ավելացել է 2.1 անգամ: Համախառն թղթային վճարումների համակարգով փոխանցումները հիմնականում պայմանավորված են կնքված ռեպո գործառնություններով, ինչպես նաեւ վարկային հարթակում կնքված գործառնություններով:

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից հաշվետու ժամանակահատվածում պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 328 հանձնարարական՝ մոտ 63 մլրդ դրամ ծավալով, ինչը 2010 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 25 մլրդ դրամով (որտեղ՝ արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված վճարումներն ավելացել են 14 մլրդ դրամով, իսկ արժեթղթերի մարման հետ կապված վճարումները՝ մոտ 11 մլրդ դրամով): Ընդ որում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց մասնակիցների կողմից կատարվել է 31.5 մլրդ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 31.4 մլրդ դրամի փոխանցում: «Գանձապետական պահառու» համակարգի միջոցով պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 1.3 մլրդ դրամի վճարում, որտեղ համապատասխանաբար մոտ 0.2 մլրդ դրամը կազմել են արժեթղթերի տեղաբաշխման և մոտ 1.1 մլրդ դրամը՝ արժեթղթերի մարման դիմաց վճարումները:

ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի մարման հետ կապված՝ իրականացվել է 0.3 մլրդ դրամի փոխանցում, իսկ տեղաբաշխման հետ կապված գործառնություններ չեն իրականացվել:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցների կողմից երկրորդային շուկայում արժեթղթերով կատարված առք ու վաճառքի գործառնությունների դիմաց (առաքում՝ վճարման դիմաց սկզբունքով) իրականացվել է 210 մլրդ դրամի 707 փոխանցում: Նշված ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 142 մլրդ դրամով: Համակարգի միջոցով կատարված ազատ առաքման գործառնությունները անվանական արժեքով կազմել են 343 մլրդ դրամ, իսկ գրավադրման հետ կապված գործառնությունները՝ 8.6 մլրդ դրամ:

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

2011 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ հաճախորդներին վճարային քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 20 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 19 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Քարտերի սպասարկման նպատակով հաշվետու ժամանակահատվածում տեղադրվել են 60 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և 2011 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 905: Այդ թվում՝ «ԱրՔա» վճարային քարտերի սպասարկումը իրականացվել է 847 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրված POS- տերմինալների ընդհանուր քանակը 4152 է, որից 521-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում: Տեղադրված իմպրինտերների ընդհանուր քանակը կազմել է 20:

ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող (սպասարկող) քարտերի տեսակները


Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր
Հայբիզնեսբանկ	+	+	+		
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+	+	+		+
Ամերիաբանկ	+	+	+		
ՎՏԲ-Հայաստան բանկ	+		+		
Հայէկոնոմբանկ	+	+			
Պրոմեթեյ բանկ	+	+			
ԲՏԱ բանկ	+	+			
Զարգացման հայկական բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+	+	+		+
Ինեկոբանկ	+	+			
Մելլաթ բանկ	+				
Բիբլոս բանկ Արմենիա	+	+			
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+	+		+
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	+	+	+	+	
Արցախբանկ	+	+			
Առէկսիմբանկ-Գազպրոմբանկ	+	+	+		
Յունիբանկ	+	+	+		
Արդշինինվեստ բանկ	+	+	+		
Արմսվիսբանկ					
ՊրոԿրեդիտ բանկ			+		

2011թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը նախորդ եռամսյակի վերջի համեմատ ավելացել է 5%-ով (16112 քարտով) և կազմել 334328: Միջազգային քարտային համակարգերի քարտերն ընդհանուր առմամբ ավելացել են 6%-ով (486952 քարտով): Այդ թվում՝ VISA-ն ավելացել է 5.7%-ով (16821 քարտով) և կազմել 313688, իսկ MasterCard-ը՝ 7.3%-ով (9325 քարտով) և կազմել 136110: Միջազգային այլ քարտերի քանակը ավելացել է 4.7%-ով (1686 քարտով):

Քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2010 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 39.6%-ով (52 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 28.7%-ով (800988):

Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 1516616 գործառնություն՝ 58.9 մլրդ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է մոտ 15%-ով (7.7 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 14.8%-ով (195870-ով):

«ԱրՔա» վճարային քարտերի զարգացման դինամիկան



VISA քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 80 մլրդ դրամ (1257119 գործառնություն), իսկ MasterCard-ով իրականացվել է 26 մլրդ դրամ ծավալով 544949 գործառնություն: VISA համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2010 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 62%-ով (30.7 մլրդ դրամ ծավալով), MasterCard-ով կատարված գործառնությունների ծավալը՝ 40%-ով (7.5 մլրդ դրամ ծավալով):

Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները (2011 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում)


Սարքեր	Գործարքներ			
	ծավալը (մլն դրամ)	*քանակը*	*այդ թվում՝ «ԱրԹա» քարտերով*	
			ծավալը (մլն դրամ)	*քանակը*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	141287	3076145	49653	1335092
այդ թվում՝ անկանխիկ	422	50677	45	27466
POS – տերմինալների/իմպրինտերների միջոցով	38360	384587	8526	131482
այդ թվում՝ անկանխիկ	11648	264343	4800	82552
Ինտերնետ միջավայրում	2544	130502	785	50042
Ընդամենը	182191	3591234	58963	1516616
այդ թվում՝ անկանխիկ	14614	445522	5629	160060

Միջազգային այլ քարտերով իրականացվել է 272550 գործառնություն՝ 16.7 մլրդ դրամ ծավալով, որն ավելացել է 5.6 մլրդ դրամով:

2011 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված գործառնությունների միջին օրական ծավալը կազմել է 2024 մլն դրամ, իսկ քանակը՝ 39903: 2010 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, գործառնությունների միջին օրական քանակը ավելացել է 29%-ով (8900-ով), իսկ ծավալը՝ 40%-ով (574 մլն դրամով):

ՀՀ տարածքում շրջանառության մեջ գտնվող մեկ վճարային քարտով իրականացված ամսական կանխիկացման գործառնությունների ծավալը կազմել է մոտ 68 հազ. դրամ, իսկ անկանխիկը՝ 6 հազ. դրամ (քանակը համապատասխանաբար կազմել է 1.3 և 0.2), որը 2010 թ. երկրորդ եռամսյակի համեմատ գրեթե պահպանվել է նույն մակարդակի վրա:

ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2008 – 2010 թթ., ինչպես նաև 2010 -2011 թթ. եռամսյակների ընթացքում



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, իրականացվում են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված՝ դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

2011 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում միջազգային դրամական փոխանցումների համակարգերին մասնակից առևտրային բանկերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 118 մլրդ դրամ (քանակը՝ 533326), որը 7.9 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Այդ համակարգերով ստացված միջոցների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 21%-ով (20 մլրդ դրամով): Միջազգային դրամական փոխանցումների համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 221 հազ. դրամ. 2010 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 9 հազ. դրամով:

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները կազմել են մոտ 43 մլրդ դրամ. նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել են 14%-ով (5.4 մլրդ դրամով), իսկ մեկ վճարման միջինը կազմել է 2.6 մլն դրամ, որն ավելացել է 0.8 մլրդ դրամով: Միաժամանակ, բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց

փոխանցումները արտասահման կազմել են 50 մլրդ դրամ. նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 6%-ով (3 մլրդ դրամով):

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով (SWIFT-ի, տելեքսի, ֆաքսի, բանկ-հաճախորդ համակարգերի միջոցով) Հայաստանի Հանրապետություն կատարված համախառն փոխանցումների ծավալը 2011 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում կազմել է 690 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 32671 փոխանցում: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 21 մլն դրամ. նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելացել է 13%-ով:

ՎճԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2011 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 10 վճարահաշվարկային կազմակերպություններ, որից 4-ը իրավունք ունեն իրականացնելու միայն դրամական միջոցների փոխանցում, մյուս 5-ը՝ վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և միաժամանակ՝ դրամական (փողային) փոխանցումներ, ինչպես նաև «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը:

Դրամական փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները միջազգային վճարային համակարգերին անդամակցելու միջոցով ապահովում են արտասահմանից ՀՀ ուղղված վճարումների իրականացումը: Այդ կազմակերպությունները հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 1.2 մլրդ դրամի վճարում, իսկ արտասահման կատարվել է 0.08 մլրդ դրամի փոխանցում: Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալում (ներառյալ առևտրային բանկերը) համապատասխանաբար կազմել են՝ արտասահման փոխանցումները՝ 0.1%-ը, իսկ արտասահմանից ստացումները՝ 0.7%: Այս կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումներում հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը կազմել է 114 հազ. դրամ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 7 հազ. դրամով:

Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող 5 կազմակերպություններ մատուցում են կանխիկ միջոցներով վարձավճարների ընդունման ծառայություններ: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ վճարահաշվարկային կազմակերպությունները համագործակցել են մոտ 46 կազմակերպությունների հետ: Ընդհանուր առմամբ, վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրականացվում է կոմունալ վճարումների, հեռախոսի և բջջային կապի դիմաց վճարումների, վարկերի մարմանն ուղղված միջոցների, բյուջե ուղղված տուգանքների և պետական տուրքերի, ինտերնետային կապի ծառայությունների դիմաց վճարների ընդունում և այլն:

Վճարումների ընդունումը իրականացվում է վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղադրված ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների և գրանցված մասնաճյուղերի միջոցով: Միաժամանակ, մի շարք առևտրային բանկերի մատուցվում են պրոցեսինգային ծառայություններ՝ առանձին վճարների հավաքագրման գործընթացում:

2011 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ նշված վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից շահագործվել են 742 ինքնասպասարկման տերմինալներ, որոնց միջոցով հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել են 7.6 մլրդ դրամի (3990711 գործառնություններ) միջոցներ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նշված ծավալն ավելացել է 58%-ով:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ գործել են վճարահաշվարկային կազմակերպությունների 22 մասնաճյուղեր, որտեղ նույնպես մատուցվել են դրամական միջոցների փոխանցման ծառայություններ: Վճարահաշվարկային կազմակերպությունների մասնաճյուղերի միջոցով կատարվել է 361201 գործառնություն՝ 2.1 մլրդ դրամ ծավալով:

Վճարահաշվարկային կազմակերպությունները պրոցեսինգային/ քլիրինգային ծառայություններ են մատուցել 11 առևտրային բանկերի համար: Այդ առևտրային բանկերը, համագործակցելով վճարահաշվարկային կազմակերպությունների հետ, իրականացրել են կոմունալ ծառայությունների դիմաց միջոցների հավաքագրում իրենց մասնաճյուղային ցանցի միջոցով, որտեղ կատարվել է մոտ 0.4 մլրդ դրամի չափով 88093 գործառնություն:

«ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը քարտերի սպասարկման սարքավորումների միջոցով ապահովել է 114 մլրդ դրամ ծավալի քարտային գործառնությունների պրոցեսինգ (2010 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 27%-ով), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացվել է 6.4 մլրդ դրամի գործառնություն, իսկ ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով՝ ՀՀ այլ բանկերի պրոցեսինգային կենտրոնների միջոցով (այդ թվում նաև արտասահմանում) իրականացվել է 11 մլրդ դրամի գործառնություն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12. 09	31.03. 10	30.06. 10	30.09. 10	31.12.10	31.03.11	30.06.11
Բանկերի քանակը	22	22	21	21	21	21	21
Բանկերի քանակն ըստ կազմակերպաիրավական ձևի	22	22	21	21	21	21	21
ԲԲԸ	3	3	3	3	3	3	3
ՓԲԸ	18	18	17	17	17	17	17
ՍՊԸ	1	1	1	1	1	1	1
Կոոպերատիվ	0	0	0	0	0	0	0
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	21	21	21	21	21	21	21
այդ թվում՝ 50%-ից ավել	13	14	14	14	14	14	14
այդ թվում՝ 95%-ից ավել	10	11	13	12	12	12	12
Բանկերի կանոնադրական հիմնադրամներում օտարերկրյա մասնակիցների բաժինը (տոկոսներով)	71.4	74.5	78.9	78.6	78.9	79.7	75.3
Վարկային կազմակերպությունների քանակը	27	28	29	32	32	31	31
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	15	15	15	15	15	13	13
այդ թվում՝ 50%-ից ավել	10	10	10	10	10	8	8
այդ թվում՝ 95%-ից ավել	8	8	8	9	9	6	6
Վարկային կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամներում օտարերկրյա մասնակիցների բաժինը (տոկոսներով)	46.5	40.9	40.3	39.9	36.3	32.5	39.9
Ապահովագրական ընկերությունների քանակը	12	12	12	11	11	11	9
այդ թվում՝ կյանքի ապահովագրության լիցենզիա ունեցող	0	0	0	0	0	0	0
այդ թվում՝ ոչ կյանքի ապահովագրության լիցենզիա ունեցող	12	12	12	11	11	11	9
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	9	9	9	8	8	8	7
այդ թվում՝ 50%-ից ավել	7	7	7	6	6	6	5
այդ թվում՝ 95%-ից ավել	5	5	5	4	4	4	3
Ապահովագրական բրոքերներ	5	5	5	5	5	5	4
Արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություն մատուցող անձինք[1]	30	30	29	29	29	29	29
այդ թվում՝ ներդրումային ծառայություն մատուցող անձ/բանկ/	22	22	21	21	21	21	21
այդ թվում՝ ներդրումային ծառայություն մատուցող ընկերություն	8	8	8	8	8	8	8
Հաշվետու թողարկող հանդիսացող ընկերությունների քանակը	19	17	17	17	15	15	15
Գրավատների քանակը	117	118	117	123	128	126	128
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզավորված	10	4	1	2	3	2	4
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզիան ուժը կորցրած ճանաչված	2	3	2	0	2	3	0
Փոխանակման կետերի քանակը[2]	250	252	243	253	254	259	256
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզավորված	4	1	1	1	3	1	0
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզիան ուժը կորցրած ճանաչված	0	4	1	0	6	1	1
Արժութային դիլերների քանակը	2	4	3	3	2	2	1
Դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություններ	10	10	9	9	10	10	9

[1] «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մասնագիտացված անձինք 2008թ. հունիսի 30-ի դրությամբ վերալիցենզավորվել են որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձինք:

[2] Ներկայացված են գործող փոխանակման կետերը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010 թվականի II եռամսյակ	2010 թվականի III եռամսյակ	2010 թվականի IV եռամսյակ	2011 թվականի I եռամսյակ	2011 թվականի II եռամսյակ
Միջին եռամսյակային ակտիվներ[1]	1332528	1391971	1497538	1602581	1727526
Միջին եռամսյակային վարկեր	746948	789388	856369	927986	1025696
Միջին եռամսյակային պարտավորություններ	1043860	1091911	1184488	1276176	1390297
Միջին եռամսյակային ավանդներ	611414	612280	637781	684778	726520
Միջին եռամսյակային կապիտալ	288667	300060	313050	326405	337229
Միջին եռամսյակային ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշ	28.8%	28.1%	22.6%	21.6%	20.4%
Միջին եռամսյակային ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշ	31.6%	29.8%	29.3%	29.3%	27.3%
Միջին եռամսյակային ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշ	134.6%	130.5%	132.3%	138.3%	133.2%

[1] Միջին եռամսյակային ցուցանիշները հաշվարկվում են եռամսյակի երեք ամիսների մեծությունների միջինացմամբ:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ[1] ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2009	31.01.2010	31.03.2010	30.06.2010	30.09.2010	31.12.2010	31.03.2011	30.06.2011	Փոփոխություն 30.06.11 – 31.03.11
Ընդամենը հաշվեկշռային կապիտալ	**261419**	**259680**	**269891**	**278430**	**291355**	**300829**	**335080**	**339694**	**4614**
Կանոնադրական հիմնադրամ	**188641**	**188641**	**192792**	**195212**	**203799**	**203799**	**210999**	**226432**	**15433**
Շահույթ / վնաս[2], *այդ թվում՝*	**64570**	**62809**	**68868**	**68449**	**72477**	**81950**	**90001**	**76496**	**-13505**
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	8577	-1781	4235	11989	20666	30046	8108	19289	11181
Տոկոսային եկամուտներ	114724	10227	31383	64395	98989	136161	38665	81945	43280
Տոկոսային ծախսեր	52925	4878	14089	28407	42945	58667	17280	36834	19554
Ոչ տոկոսային եկամուտներ	31746	1800	8357	17200	27655	40654	10348	21932	11584
Ոչ տոկոսային ծախսեր	59602	5006	15651	32347	49301	69335	18102	37972	19870
Այլ ծախսեր[5]	25396	3925	5765	8847	13723	18766	5522	9721	4199
Ընդհանուր պարտավորություններ[3], *այդ թվում՝*	**1047592**	**1025141**	**1098179**	**1035545**	**1111185**	**1241521**	**1321855**	**1419561**	**97706**
Բանկերի թղթակցային հաշիվներ	6531	8001	10472	9821	7632	11539	7337	2831	-4506
Այլ պարտավորություններ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ)	211233	190343	192907	190907	223949	267811	283141	323560	40419
Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	87384	85847	95924	97932	118465	138279	158597	188480	29883
Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ	252480	253693	274894	241966	260918	265045	283997	288636	4639
Ժամկետային ավանդներ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ	374313	366139	387103	354138	357443	408017	433339	460006	26667
Ընդհանուր ակտիվներ[4], *այդ թվում՝*	**1325807**	**1300207**	**1383592**	**1329239**	**1417835**	**1560472**	**1656935**	**1759256**	**102321**
Կանխիկ դրամական միջոցներ	64673	64444	66568	64161	68727	74900	70391	68825	-1566
Թղթակցային հաշիվներ բանկերում (ներառյալ ԿԲ)	274858	265679	291058	198963	203462	205044	227547	219417	-8130
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ)	67603	64362	54557	66866	67657	84930	77154	105246	28092
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16598	15176	15540	15689	17855	20561	19002	24651	5649
Պետական արժեթղթեր, այդ թվում	109342	108394	106748	112438	128331	151298	150803	146022	-4781
ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր						0	0	0	0
Այլ արժեթղթեր	4180	5581	6267	5128	6038	5695	6473	7110	637
Վարկեր իրավաբանական և ֆիզիկական անձանց	703366	694685	747459	758924	810409	888612	966603	1048231	81628
Վարկային ներդրումներ, *այդ թվում՝*	**756287**	**733654**	**784999**	**794821**	**837216**	**934383**	**1005698**	**1107235**	**101536**
1. Ստանդարտ	719963	682356	741064	756325	799366	905748	970014	1069835	99821
2. Հսկվող	14875	29651	23168	18337	18902	11320	20727	19345	-1382
3. Ոչ ստանդարտ	10104	15805	16047	13753	13755	11257	8498	13858	5360
4. Կասկածելի	11345	5842	4721	6405	5193	6057	6459	4196	-2263

[1] Հաշվարկներում ընդգրկված են ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերը:

[2] Ներառված է նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի (վնասի) գումարը:

[3] Տվյալներում ներառված չեն ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունները:

[4] Տվյալները ներկայացնում են բանկերի հաշվեկշռային ընդհանուր ակտիվները, որտեղ ընդգրկված են նաև նյութական ակտիվները և այլ պահանջները, հաշվարկված ստացվելիք տոկոսները: Նվազեցված են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունների չափով:

[5] Տվյալներում ընդգրկված են ակտիվների զուտ մասհանումները և շահութահարկը:

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2009	31.03.2010	30.06.2010	30.09.2010	31.12.2010	31.03.2011	30.06.2011	Փոփոխություն 30.06.11 - 31.03.11
Ընդամենը հաշվեկշռային կապիտալ	**26159.4**	**29177.1**	**30298.0**	**32320.8**	**35876.8**	**41440.9**	**40039.1**	**-1401.8**
Կանոնադրական հիմնադրամ	**19799.7**	**22799.7**	**22799.6**	**23883.4**	**25591.8**	**28259.1**	**33782.0**	**5522.9**
Շահույթ / վնաս[1], *այդ թվում՝*	**5903.9**	**5918.6**	**6820.1**	**7891.8**	**9569.2**	**12542.7**	**5230.9**	**-7311.8**
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	2589.9	72.0	1395.8	2610.0	4301.5	3106.2	2258.0	-848.2
Տոկոսային եկամուտներ	10546.9	2724.7	5754.3	8752.3	11952.4	3476.0	6939.4	3463.4
Տոկոսային ծախսեր	3291.7	902.0	1906.0	2888.6	3881.4	1003.3	2246.3	1243.0
Ոչ տոկոսային եկամուտներ	3768.3	955.4	1633.6	2581.5	4148.8	1335.1	2445.1	1110.0
Ոչ տոկոսային ծախսեր	4976.2	1256.8	2657.9	4022.6	5791.1	1753.3	3544.4	1791.1
Զուտ մասհանումներ	2784.6	1340.1	1165.2	1397.4	1069.7	-1226.2	2195.5	3421.7
Այլ ծախսեր[2]	672.7	109.1	255.1	415.2	1057.6	174.5	302.7	128.2
Ընդհանուր պարտավորություններ[3], *այդ թվում՝*	**49573.4**	**55567.5**	**55965.3**	**53778.5**	**51229.7**	**60310.8**	**63464.7**	**3153.9**
Բանկերից ներգրաված միջոցներ	20357.4	21792.1	18584.8	16964.0	10045.2	16993.9	17360.0	366.1
Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցներ	11535.3	13101.5	13105.2	12254.2	13436.0	12974.8	14934.0	1959.2
Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ	147.4	175.8	219.6	213.8	211.5	214.2	266.6	52.4
Ժամկետային պարտավորություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ	11395.1	13159.9	14691.9	14976.3	16232.5	19654.2	20150.3	496.1
Ընդհանուր ակտիվներ[4], *այդ թվում՝*	**75822.8**	**84841.6**	**86347.1**	**86183.7**	**87194.9**	**101751.7**	**103503.9**	**1752.2**
Կանխիկ դրամական միջոցներ	663.7	600.2	185.3	180.9	246.9	276.5	284.7	8.2
Բանկային հաշիվներ	3146.9	7169.6	4395.9	5097.9	4078.2	6347.1	5323.3	-1023.8
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ	15650.3	17927.7	20733.9	21197.7	17557.8	23419.8	25162.7	1742.9
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	542.9	839.1	1143.2	1292.1	1539.3	1735.9	2287.7	551.8
Վարկեր	45011.1	47967.7	49831.2	49174.2	55076.3	58999.3	62187.0	3187.7
Ֆինանսական վարձակալություն	5285.2	4882.7	4879.6	4822.6	4577.7	4592.2	4726.5	134.3
Պետական արժեթղթեր	2131.2	2613.5	2305.5	1041.1	744.2	451.1	402.5	-48.6
Այլ արժեթղթեր	3.7	3.7	3.7	3.7	3.7	3.7	853.6	849.9
Վարկային ներդրումներ, *այդ թվում՝*	**59830.2**	**65517.0**	**70443.4**	**71277.3**	**72393.5**	**83663.2**	**88831.6**	**5168.4**
Ստանդարտ	57292.0	62540.2	68005.6	68675.5	70478.8	80940.2	86093.8	5153.6
Հսկվող	1468.7	1882.1	1591.7	1752.0	1080.5	1840.5	1637.2	-203.3
Ոչ ստանդարտ	575.8	622.8	426.4	554.2	421.1	583.1	654.6	71.5
Կասկածելի	493.6	471.9	419.7	295.5	413.1	299.3	437.4	138.1

[1] Ներառված է նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի (վնասի) գումարը:
[2] Տվյալներում ընդգրկված են ակտիվների զուտ մասհանումները և շահութահարկը:
[3] Տվյալները ներկայացնում են վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ընդհանուր պարտավորությունները, որտեղ, վերը նշված տողերից բացի, ընդգրկված են նաև այլ պարտավորությունները, ՀՀ Կառավարության նկատմամբ պարտավորությունները և հաշվարկված վճարվելիք տոկոսները:
[4] Տվյալները ներկայացնում են վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ընդհանուր ակտիվները, որտեղ, վերը նշված տողերից բացի, ընդգրկված են նաև նյութական ակտիվները և այլ պահանջները, հաշվարկված ստացվելիք տոկոսները, սակայն նվազեցված են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունների չափով:
[5] N1[1] նորմատիվի հաշվարկում ընդգրկված են միայն այն վարկային կազմակերպությունների տվյալները, որոնք, համաձայն իրենց կանոնադրության, հրապարակային օֆերտայի միջոցով ներգրավում են փոխառություններ:

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2009	31.03.2010	30.06.2010	30.09.2010	31.12.2010	31.03.2011	30.06.2011	Փոփոխություն (30.06.2011)-(31.03.2011)
Դրամական միջոցներ	239	19	34	32	331	49	49	-1
Բանկային հաշիվներ	1775	1164	1358	2276	3320	1582	1029	-553
Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ	1761	1655	2254	2141	2249	3266	3129	-137
Վերաապահովագրողների բաժինը ապահովագրական պահուստներում	0	0	0	0	0	1720	1462	-258
Հատուցումների գծով պահանջներ	165	114	86	165	222	391	315	-75
Ընթացիկ ավանդներ և այլ ներդրումներ	8957	10271	9886	9995	12789	15183	14766	-417
Ոչ ընթացիկ ավանդներ և այլ ներդրումներ	1635	861	548	837	816	844	625	-219
Տրամադրված փոխառություններ	132	455	574	1531	705	862	1713	851
Արժեթղթեր	1243	1236	1235	1446	2611	3415	3103	-311
Դեբիտորական պարտքեր	565	389	613	714	1426	1595	1403	-192
Հիմնական միջոցներ	624	711	713	763	1123	1489	1702	214
Հնարավոր կորուստների անհավաքագրելիության պահուստներ	-311	-250	-228	-315	-338	-464	-551	-87
Այլ ակտիվներ	179	185	168	115	260	2021	2138	116
Ընդամենը ակտիվներ	**16964**	**16809**	**17239**	**19702**	**25515**	**31952**	**30883**	**-1069**
Դրամ	6937	6639	7702	9213	16160	21983	20826	-1157
Արտարժույթ	10027	10170	9537	10489	9355	9969	10057	88
Վճարվելիք գումարներ ապահովագրական հատուցումների գծով	20	18	43	108	91	99	101	2
Համասապահովագրողներին, վերաապահովագրողներին փոխանցվելիք գումարներ	1579	896	1735	1435	1818	1189	1214	25
Ընթացիկ փոխառություններ և վարկեր	0	0	70	1107	103	0	0	0
Ապահովագրական պահուստներ	2719	2837	2865	2917	2913	13367	11562	-1805
ՉԱՊ	2051	2207	2214	2163	1997	11459	9365	-2094
Պահանջների պահուստ	536	481	483	559	607	1586	1869	283
Մաթեմատիկական պահուստ	0	0	0	0	0	0	0	0
Այլ պահուստներ	132	149	168	195	309	322	328	6
Կրեդիտ. պարտքեր բյուջեի և պարտադիր սոց. ապահովագրության վճարումների գծով	105	91	94	91	124	172	200	29
Ոչ ընթացիկ փոխառություններ և վարկեր	0	0	0	0	0	0	0	0
Այլ պարտավորություններ	255	738	944	1428	7906	2075	2352	277
Ընդամենը պարտավորություններ	**4678**	**4580**	**5751**	**7086**	**12956**	**16901**	**15429**	**-1472**
Դրամ	3325	3913	4468	5134	11611	16310	15128	-1182
Արտարժույթ	1353	667	1283	1952	1345	592	301	-291
Կանոնադրական կապիտալ	10938	10654	9654	10985	12116	13476	13476	0
Ընթացիկ ժամ.-ի չբաշխված շահույթ/վնաս	776	363	11	-152	-945	1159	1615	456
Նախորդ ժամ.-ի չբաշխված շահույթ/վնաս	336	868	1385	1386	892	-85	-141	-56
Այլ	235	345	438	397	496	501	504	4
Ընդամենը սեփական կապիտալ	**12286**	**12229**	**11488**	**12616**	**12559**	**15051**	**15454**	**403**
Այլ ցուցանիշներ								
Ապահովագրական գումարներ	3386642	3344961	2968127	3250344	3052439	6956056	5719808	-1236248
Ապահովագրավճարների համախառն մեծությունը	8103	1898	4786	6582	8253	12806	15393	2587
Վերաապահովագրողին փոխանցված ապահովագրավճարներ	4036	582	2427	3074	4010	453	1165	712
Ապահովագրական հատուցումների համախառն մեծությունը	1901	355	782	1324	1746	1275	2897	1622
Վերաապահովագրողի բաժինն ապահովագրական հատուցումներում	891	114	223	415	535	206	365	159

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2009	31.03.2010	30.06.2010	30.09.2010	31.12.2010	31.03.2011	30.06.2011	Փոփոխություն (30.06.2011) - (31.03.2011)
Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ	**2936.3**	**2921.0**	**2787.5**	**2929.4**	**3196.2**	**3470.4**	**3753.1**	**282.6**
Չբաշխված շահույթ (վնաս), այդ թվում՝	317.6	381.4	223.4	328.0	416.9	649.9	717.7	67.7
Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ	210.6	98.3	29.7	205.5	295.8	252.3	478.2	225.9
Միջնորդավճարներ և եկամուտներ ՆԾ մատուցումից	50.8	5.5	12.1	16.7	24.4	240.0	449.1	209.1
Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ	2416.5	234.4	914.8	1234.8	1560.5	917.2	1126.6	209.3
Կանոնադրական կապիտալ	1755.8	2280.6	2318.2	2351.9	2514.8	2578.8	2728.8	150.0
Ընդհանուր պարտավորություններ	**12636.6**	**10977.1**	**12365.9**	**14021.1**	**16359.9**	**15128.5**	**18730.5**	**3602.0**
Ռեզիդենտ բանկերից ներգրաված վարկեր	1541.1	802.0	620.7	325.2	2017.6	1458.0	2360.7	902.7
Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով	10402.8	9581.7	11246.0	13197.2	13879.6	13370.7	15933.6	2562.9
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ	**15572.9**	**13898.1**	**15153.4**	**16950.5**	**19556.1**	**18599.0**	**22483.6**	**3884.6**
Կանխիկ դրամական միջոցներ	166.1	177.9	184.2	189.3	200.2	208.0	8.1	-199.9
Բանկային հաշիվներ	581.5	270.6	406.1	274.0	233.4	507.2	680.7	173.6
Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր	10534.1	9858.6	11488.8	13404.0	14180.6	13619.6	16160.3	2540.7
Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	29.0	29.0
Պետական արժեթղթեր	1116.6	1232.1	859.5	766.4	1713.4	2416.3	3725.7	1309.4
Այլ արժեթղթեր	1363.5	747.3	896.2	795.5	886.8	905.7	851.4	-54.3

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՋԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010				2011	
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	I եռ.	II եռ.
ՆԲ կողմից կնքված գործարքներ	**326718.0**	**328568.5**	**229798.0**	**114739.2**	**102894.1**	**170026.4**
բաժնային արժեթղթեր	1741.0	2021.0	2946.3	547.6	1318.0	2717.7
այդ թվում՝ բորսայական	0.0	10.3	7.7	-	-	45.6
կորպորատիվ պարտատոմսեր	460.2	526.8	82.5	242.3	-	64.9
այդ թվում՝ բորսայական	329.4	525.3	77.3	2.1	-	-
պետական պարտատոմսեր	42546.8	44406.5	69378.9	44284.7	28313.2	28464.6
այդ թվում՝ բորսայական	1927.4	1413.9	5202.1	825.3	1153.9	48.0
ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ[1]	281970.0	281614.2	157390	69665	73263	138779
այդ թվում՝ բորսայական	1372.4	822.8	658	621	436	439
ՆԸ կողմից կնքված գործարքներ	**41637.3**	**44730.2**	**53622.8**	**23125.4**	**14866.1**	**18053.0**
բաժնային արժեթղթեր	44.7	82.5	27.6	49.4	354.1	154.5
այդ թվում՝ բորսայական	2.5	11.9	14.6	19.4	159.5	148.6
կորպորատիվ պարտատոմսեր	1170.1	799.9	944.5	119.7	145.3	97.4
այդ թվում՝ բորսայական	1149.9	780.6	936.6	119.7	145.3	97.4
պետական պարտատոմսեր	4474.0	5577.8	7897.9	5121.8	1926.0	2427.4
այդ թվում՝ բորսայական	324.8	30.7	453.2	-	-	-
ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ[1]	35948.4	38270.1	44752.8	17834.4	12440.7	15373.8
այդ թվում՝ բորսայական	1131.9	920.8	775.8	621.0	435.7	439.3

[1] *Ռեպո/հակադարձ ռեպո գործարքները չեն ներառում երկարաձգումները:*

ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(2011 թ. հունիսի 30-ի դրությամբ)

(հազար ՀՀ դրամ)

	30.06.11	*31.03.11*	*31.12.10*
Ակտիվներ			
Ակտիվներ արտարժույթով			
Դրամական միջոցներ	7,658,919	7,681,141	7,552,047
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	151,135,770	157,930,327	158,102,101
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	355,724,128	353,428,779	404,632,917
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	917	917	917
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	136,905,589	143,405,674	95,678,521
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	60,366,610	65,572,471	63,670,237
Այլ ակտիվներ	56,389	956,331	874,492
	711,848,322	**728,975,640**	**730,511,232**
Ակտիվներ տեղական արժույթով			
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	87,408,229	68,350,348	70,615,499
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	97,794,433	92,689,719	88,705,765
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	4,270,618	4,200,846	4,132,916
Հիմնական միջոցներ	27,952,550	26,421,051	26,312,189
Ոչ նյութական ակտիվներ	562,469	585,031	583,179
Այլ ակտիվներ	5,279,241	8,399,086	3,752,261
	223,267,540	**200,646,081**	**194,101,809**
Ընդամենը ակտիվներ	**935,115,862**	**929,621,721**	**924,613,041**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	89,281,502	91,132,927	99,650,034
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	3,992,963	3,928,460	3,989,112
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	82,412,048	86,198,942	82,284,509
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	159,506	4,023	19,478
Այլ փոխառություններ	29,518,696	29,337,960	27,599,809
Այլ պարտավորություններ	135,037	185,101	146,096
	205,499,752	**210,787,413**	**213,689,038**
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	338,922,765	312,419,975	348,164,734
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	101,072,228	111,990,331	80,825,771
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	94,478,800	101,877,955	106,545,573
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	206,518,348	205,044,896	195,802,721
Այլ պարտավորություններ	1,492,072	1,196,985	1,353,894
	742,484,213	**732,530,142**	**732,692,693**
Ընդամենը պարտավորություններ	**947,983,965**	**943,317,555**	**946,381,731**
Սեփական կապիտալ			
Թողարկված կապիտալ	100,000	100,000	100,000
Գլխավոր պահուստ	17,389,049	17,389,049	17,389,049
Լրացուցիչ կանոնադրական կապիտալ	85,663,194	85,663,194	85,663,194
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	(1,417,007)	(1,707,073)	(1,628,760)
Կուտակված վնաս	(114,603,339)	(115,141,004)	(123,292,173)
Ընդամենը սեփական կապիտալ	**(12,868,103)**	**(13,695,834)**	**(21,768,690)**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**935,115,862**	**929,621,721**	**924,613,041**

ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2011 թվականի օգոստոսի 16-ին և ստորագրվել:

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

Նախագահ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը և կազմը

ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին

2011 թ. 2-րդ եռամսյակ (ներառյալ եզրափակիչ շրջանառությունը)

Եռամսյակի սկիզբ	**ՀՓԻ**		**ԱՄՆ դոլար**
I. Համախառն արտաքին ակտիվներ			1,823,443,175.87
այդ թվում՝			
միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)			1,823,442,611.95
որից՝			
ՀՓԻ ԱՄՀ-ում	19,873,717.00		31,509,871.35
պահուստային դիրք ԱՄՀ-ում	0.00		0.00
II. Զուտ արտաքին ակտիվներ			1,101,748,095.43
որից՝ ազատ փոխարկելի արժույթով			1,101,747,531.51

Եռամսյակի վերջ			
I. Համախառն արտաքին ակտիվներ			1,782,034,585.73
այդ թվում՝			
միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)			1,782,034,032.91
որից՝			
ՀՓԻ ԱՄՀ-ում	10,257,135.00		16,416,012.48
պահուստային դիրք ԱՄՀ-ում	0.00		0.00
II. Զուտ արտաքին ակտիվներ			1,065,463,805.99
որից՝ ազատ փոխարկելի արժույթով			1,065,463,253.17

ՀՀ ԿԲ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ [1, 2]

Վիճակագրության վարչություն
Անուշ Իգիթխանյան, Արմեն Գագիկյան

Վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքը[3] տվյալ երկրի և արտաքին աշխարհի միջև իրականացված տնտեսական բոլոր գործառնությունների վիճակագրական արտացոլումն են: Եթե վճարային հաշվեկշիռն արտացոլում է ժամանակի որոշակի միավորի ընթացքում, սովորաբար՝ 1 տարում իրականացված գործառնությունները, ապա միջազգային ներդրումային դիրքն արտացոլում է նախկինում իրականացված բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքում արտաքին աշխարհի նկատմամբ ձևավորված երկրի ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ժամանակի որոշակի պահի դրությամբ:

Հայաստանի վճարային հաշվեկշիռը կազմվում է 1993 թվականից, իսկ միջազգային ներդրումային դիրքը՝ 1998 թվականից՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից: Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վիճակագրությունը կազմվում է միջազգային չափանիշներին համապատասխան և համահունչ է միջազգային չափորոշիչներին, թեև շարունակական բարելավման կարիք ունի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2010 թվականի ընթացքում հիմնականում պահպանվել են ՀՀ վճարային հաշվեկշռի՝ նախորդ տարիների զարգացումները: Մասնավորապես՝ գրանցվել է ներմուծման և արտահանման ծավալների աճ, ինչպես նաև աշխատուժից եկամուտների ծավալների աճ: Չնայած այս ամենին, ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ էապես չի փոփոխվել և ՀՆԱ-ում կազմել է 14.7 %՝ նախորդ տարվա 15.8 %-ի փոխարեն, իսկ բացարձակ առումով՝ ընթացիկ հաշվի պակասուրդը աճել է 4.3 մլն դոլարով: Ընդ որում՝ մոտ 2.3 %-ով նվազել է «Ապրանքներ» հոդվածի բացասական հաշվեկշիռը (ապրանքների և ծառայությունների ներմուծման աճը կազմել է 14.2 %, այն դեպքում, երբ արտահանումն ավելացել է 44.7 %-ով), իսկ աշխատուժից եկամուտների ու մասնավոր տրանսֆերտների զուտ ներհոսքի նվազումը կազմել է 2.5 %:

---

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] *Նյութը յուրաքանչյուր տարի հրապարակվում է «ՀՀ կենտրոնական բանկի բաներ» եռամսյա պարբերականում (սկսած՝ 2000 թվականից, հիմնականում՝ 2-րդ եռամսյակի թողարկման մեջ):*

[2] *Վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին առևտրի վերաբերյալ տվյալների աղբյուրը Ազգային վիճակագրական ծառայությունն է:*

[3] *Հայաստանում վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վերաբերյալ վիճակագրության պաշտոնական հրապարակողն Ազգային վիճակագրական ծառայությունն է (ԱՎԾ): ՀՀ կենտրոնական բանկը հավաքագրում, ամփոփում, մշակում և ԱՎԾ-ին է ներկայացնում ֆինանսական համակարգին առնչվող տեղեկատվությունը, ինչպես նաև Կառավարությանն առնչվող գործառնությունների մի մասը:*

Աղյուսակ 1. ՀՀ վճարային հաշվեկշիռը 2009 - 2010 թվականներին (մլն դոլար, վերլուծական ներկայացում)

Ցուցանիշներ	2009					2010				
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	2009	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	2010
Ընթացիկ հաշիվ	**-268**	**-269**	**-284**	**-549**	**-1369**	**-417**	**-368**	**-270**	**-319**	**-1373**
Ընթացիկ հաշիվ (առանց վերաներդրված եկամտի)	**-252**	**-200**	**-219**	**-433**	**-1104**	**-357**	**-313**	**-195**	**-250**	**-1115**
Ապրանքներ	-434	-437	-521	-689	-2081	-471	-475	-509	-577	-2033
Արտահանում	130	169	217	233	749	224	295	304	352	1175
Ներմուծում	-564	-606	-738	-922	-2830	-695	-771	-812	-930	-3208
Ծառայություններ	-47	-55	-72	-94	-268	-56	-60	-67	-59	-242
Արտահանում	106	140	190	153	590	122	176	248	215	762
Ներմուծում	-152	-196	-262	-248	-858	-179	-236	-315	-274	-1004
Եկամուտներ	68	43	71	-16	167	6	58	148	127	339
Եկամուտ աշխատուժից	94	134	159	159	547	81	159	252	279	771
Եկամուտ ներդրումներից	-26	-91	-87	-176	-380	-75	-101	-104	-152	-432
այդ թվում՝ վերաներդրված եկամուտ	-16	-69	-65	-116	-265	-60	-55	-75	-69	-258
Ընթացիկ տրանսֆերտներ	144	181	238	251	814	105	110	157	190	563
Պետական	22	7	24	28	81	15	16	29	25	86
Մասնավոր	123	173	214	223	733	89	94	128	165	477
Կապիտալի և ֆինանսական հաշիվ *(առանց ԿԲ միջազգային պահուստների փոփոխության և ԱՄՀ վարկի օգտագործման)*	**-26**	**727**	**333**	**480**	**1514**	**314**	**264**	**258**	**341**	**1177**
Կապիտալի հաշիվ	16	19	25	29	89	20	24	30	34	108
Ֆինանսական հաշիվ	-43	708	308	452	1425	294	240	228	307	1069
Ուղղակի ներդրումներ	33	151	171	370	725	125	108	165	163	562
Պորտֆելային ներդրումներ	0	10	-4	-10	-4	6	3	1	0	11
Այլ ներդրումներ	-75	547	141	91	704	163	128	61	144	496
Ակտիվներ	-163	-76	-78	-160	-478	41	-1	-156	-129	-246
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-1	0	-4	2	-2	0	1	-2	1	0
Պետական հատված	0	0	0	0	0	-1	0	0	0	-2
Բանկեր	-20	-162	-14	-7	-203	-36	10	-32	54	-5
Այլ հատվածներ	-142	86	-61	-156	-273	79	-11	-122	-185	-239
Պարտավորություններ	87	623	220	252	1182	122	129	218	273	742
Դրամավարկային կարգավորման մարմիններ	6	25	140	0	171	-1	0	5	0	4
Պետական հատված[4]	25	561	70	229	885	63	47	42	43	194
Բանկեր	33	-16	-25	-33	-42	-10	28	134	105	257
Այլ հատվածներ	24	53	35	56	168	32	55	9	96	191
Հաշվեկշիռ	**-294**	**458**	**49**	**-69**	**145**	**-103**	**-104**	**-12**	**22**	**-196**
ԿԲ միջազգային պահուստների փոփոխություն	**43**	**-610**	**-48**	**14**	**-600**	**52**	**76**	**15**	**-31**	**111**
ԱՄՀ վարկի օգտագործում	**240**	**148**	**0**	**48**	**436**	**74**	**15**	**29**	**44**	**162**
Սխալներ և բացթողումներ	**11**	**3**	**-1**	**6**	**19**	**15**	**12**	**-3**	**-7**	**18**

2010 թվականի ընթացքում ավելացել են ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունների շահաբաժինները և բաշխված շահույթը (101.6 մլն ԱՄՆ դոլար): Այս ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ աճել է մոտ 2 անգամ: Կապիտալի հաշվում նախորդ տարվա համեմատ ավելացել են պետական տրանսֆերտ-

[4] *Պետական հատվածի պարտավորությունների գումարից նվազեցվել են պետական հատվածի կողմից ստացված ԱՄՀ վարկի գումարները և ավելացվել են ԱՄՀ վարկի օգտագործմանը:*


ները՝ 11.9 մլն դոլարով և կազմել են 37.4՝ պայմանավորված «Լինսի հիմնադրամի» միջոցների ներհոսքի ավելացմամբ, աճ է գրանցվել նաև մասնավոր կապիտալ տրանսֆերտներ հոդվածում՝ 6.9 մլն ԱՄՆ դոլարով: Նշված հոդվածների ավելացման արդյունքում կապիտալի հաշիվը աճել է 18.8 մլն ԱՄՆ դոլարով: Կապիտալի և ֆինանսական հաշվում 2010 թվականի ընթացքում գրանցվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների 561.8 մլն ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք (նախորդ տարվա համեմատ նվազել է 22.5%-ով): Պետական հատվածում կտրուկ նվազել են ոչ ռեզիդենտներից ներգրավված նոր վարկերը (754.9 մլն ԱՄՆ դոլարով), թեև արտաքին փոխառությունների մակարդակը գերազանցել է նախաճգնաժամային տարիների ցուցանիշները: Բանկային համակարգում նվազել են ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը, միևնույն ժամանակ ավելացել են ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերը՝ համապատասխանաբար 57.5 մլն ԱՄՆ դոլարով և 190.6 մլն ԱՄՆ դոլարով: Տարվա ընթացքում մասնավոր հատվածի կողմից կանխիկ արտարժույթի զուտ կուտակված ծավալները կազմել են շուրջ 203.6 մլն ԱՄՆ դոլար: 2010 թվականին շուրջ 111.5 մլն ԱՄՆ դոլարով նվազել են ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պահուստները:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ

Ապրանքների արտահանում

Ապրանքների արտահանումը (կրեդիտ) 2010 թվականին կազմել է 1175.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 57.0%-ով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ արտահանումն աճել է՝ 61.8%-ով՝ նախորդ տարվա 31.4% նվազման փոխարեն:


Գծապատկեր 1. Արտահանումը 2006 - 2010 թթ.



Ընդ որում՝ 2010 թվականին «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ ավելացել են 161.1 մլն ԱՄՆ դոլարով կամ մոտ 2 անգամ, «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալներն ավելացել են շուրջ 101.3 մլն դոլարով կամ 43.8 %-ով, «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալներն ավելացել են 29.0 մլն ԱՄՆ դոլարով կամ 27.6 %-ով:

Ի տարբերություն վերոնշյալ ապրանքախմբերի, նվազել է «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի (8.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 61.8 %-ով) և «Մանածագործական իրեր» ապրանքախմբի արտահանումը (8.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 54.5%-ով):

Գծապատկեր 2. Արտահանման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի[5]



2002 թվականից արձանագրվել է մետաղական արտադրանքի և հանքանյութերի արտահանման ծավալների աճ, իսկ վերջին տարիներին աճը կազմել է արտահանման կեսից ավելին: 2010 թվականին մետաղները հիմնականում արտահանվել են Նիդեռլանդներ (արտահանվում է երկաթամիահալվածք և պղինձ), Բուլղարիա (արտահանվում է պղնձի հանքաքար), Գերմանիա (արտահանվում է պղինձ, երկաթամիահալվածք և մոլիբդեն), ԱՄՆ (արտահանվում է ալյումին), Չինաստան (արտահանվում է պղնձի և մոլիբդենի հանքաքար) և Կանադա (արտահանվում է ոսկի):

Աղյուսակ 2. Հիմնական արտահանվող մետաղների տեսակները

Մետաղը	2008		2009		2010	
	Արժեք (մլն դոլար)	Տես. կշիռ արտահանման մեջ (%)	Արժեք (մլն ԱՄՆ դոլար)	Տես. կշիռ արտահանման մեջ (%)	Արժեք (մլն ԱՄՆ դոլար)	Տես. կշիռ արտահանման մեջ (%)
Պղինձ	168.8	16.0	164.0	23.1	310.3	29.8
որից՝ հանքաքար	99.9	9.5	98.8	13.9	210.6	20.2
Մոլիբդեն	40.5	3.8	20.6	2.9	19.3	1.9
որից՝ հանքաքար	20.8	2.0	11.1	1.6	3.8	0.4
Երկաթամիահալվածք	208.8	19.8	86.5	12.2	119.6	11.5
Ալյումին	40.6	3.8	60.3	8.5	83.3	8.0
Ոսկի	5.3	0.5	32.8	4.6	28.6	2.7
Ընդամենը արտահանում	1057.2	100.0	710.2	100.0	1041.1	100.0

2010 թվականին, 2009 թվականի համեմատ, արտահանումը ավելացել է 46.6%-ով (ըստ առևտրի վիճակագրության), ընդ որում՝ գները բարձրացել են 20.9%-ով, իսկ ֆիզիկական ծավալները՝ 25.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է համաշխարհային տնտեսությունում հանքահումքային և մետաղական արտադրանքների գների բարձրացմամբ: Գների և ֆիզիկական ծավալների աճ է արձանագրվել գրեթե բոլոր ապրանքախմբերի մասով: «Թանկարժեք քարեր և մետաղներ» ապրանքախմբի գներն աճել են 0.5%-ով, իսկ ֆիզիկական ծավալները՝ 27.1%-ով՝ պայմանավորված վերոնշյալ ապրանքախմբի արտա-

[5] *Ապրանքների արտահանումը գրաֆիկում ներկայացված է ըստ ապրանքների արտաքին առևտրի վիճակագրության:*

հանման մեջ մեծ կշիռ ունեցող ոսկու և ադամանդի արտահանման գների և ֆիզիկական ծավալների աճով: «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի գները բարձրացել են 31.0%-ով, իսկ ֆիզիկական ծավալները՝ 12.8%-ով: Սա բացատրվում է նրանով, որ վերոնշյալ ապրանքախմբի արտահանման մեջ մեծ կշիռ ունեն ալյումինի արտադրանքները, որոնց արտահանման գներն ու ֆիզիկական ծավալները զգալի աճել են: Զգալի փոփոխություն է արձանագրվել «Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ» ապրանքախմբում. արտահանումն ավելացել է 97.7%-ով, ընդ որում՝ գներն աճել են 31.7%-ով, իսկ ֆիզիկական ծավալները՝ 66.0%-ով:

Աղյուսակ 3. Արտահանման գնի և ծավալի փոփոխությունը (%) 6

Ապրանքախումբ	2009			2010		
	Աճ (+), նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված		Աճ (+), նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված	
		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ
Ընդամենը	**-32.8**	**-8.0**	**-24.8**	**46.6**	**25.7**	**20.9**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն [7]	-60.8	-48.7	-12.1	-40.6	-35.7	-4.9
Թանկարժեք քարեր և մետաղներ	-39.3	-49.6	10.3	27.6	27.1	0.5
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ [8]	-20.9	-2.9	-18.0	97.7	66.0	31.7
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	-33.3	9.0	-42.3	43.8	12.8	31.0
Գյուղատնտեսական մթերքներ [9]	-32.5	-22.7	-9.8	26.5	20.1	6.4
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ [10]	-34.9	-32.3	-2.6	1.1	13.1	-12.0
Այլ ապրանքներ [11]	-36.5	-21.7	-14.8	-3.9	10.6	-14.5

Ինչպես նախորդ տարիներին, արտահանվող ապրանքների ապրանքային բևեռացման ցուցանիշը[12] շարունակել է բարձր մնալ (2010 թ. 4 հիմնական ապրանքախմբերը կազմել են ամբողջ արտահանման մոտ 86.9 %-ը): Ընդ որում՝ արտահանվող ապրանքների ապրանքային բևեռացման ցուցանիշը 2010 թվականին աճել է՝ կազմելով 47.3 %, ինչը պայմանավորված է արտահանման մեջ «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբի տեսակարար կշռի մեծացմամբ (2010 թ. կազմել է 29.5 %, 2009 թ.՝ 20.5 %):

Աղյուսակ 4. Արտահանման ապրանքային բևեռացումը (%)

Տարեթիվ	2005	2006	2007	2008	2009	2010
Ապրանքային բևեռացում	50.0	45.5	43.7	43.7	44.0	47.3

ԱՊՀ անդամ երկրներ արտահանվող ապրանքների ծավալներն ավելացել են 60.4 մլն ԱՄՆ դոլարով: Զգալիորեն աճել է ապրանքների արտահանումը Ռուսաստանի Դաշնություն՝ 53.1 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում արտահանվում են ոգելից խմիչքներ, ադամանդ, մեքենաներ ու սարքավորումներ, ոսկերչական իրեր և մրգեր) և Թուրքմենստան՝ 5.9 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում արտահանվում են ոսկերչական իրեր): Այլ երկրներ արտահանման ծավալներն աճել են 270.5 մլն ԱՄՆ

[6] Գների հաշվարկն իրականացվել է ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության կողմից:

[7] Ներառում է «Մանածագործական իրեր», «Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ», «Կաշվե հումք, մորթի, կաշի և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերը:

[8] Ներառում է «Հանքահումքային մթերքներ», «Քիմիական արտադրության ապրանքներ», «Պլաստմասսա, կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից» ապրանքախմբերը:

[9] Ներառում է «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք», «Բուսական ծագման արտադրանք», «Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր», «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերը:

[10] Ներառում է «Մեքենաներ և սարքավորումներ», «Տրանսպորտային միջոցներ», «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբերը:

[11] Ներառում է «Փայտ և փայտյա իրեր», «Թուղթ և թղթյա իրեր», «Կահույք և խաղալիքներ», «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերը:


[12] Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$K = \frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100, \text{ որտեղ՝}$$

K-ն բևեռացման գործակիցն է, x_i-ը՝ i ապրանքի արտահանման (ներմուծման) ծավալը, X-ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը: Մեկ ապրանքի արտահանման (ներմուծման) դեպքում ցուցանիշը հավասար կլինի 100%-ի. որքան ապրանքախմբերի թվաքանակը մեծ է, այնքան բևեռացման ցուցանիշը փոքր է:

դոլարով, որից 190.9 մլն ԱՄՆ դոլարով՝ արտահանումը Եվրոմիության երկրներ: Զգալիորեն աճել է ապրանքների արտահանումը դեպի Բուլղարիա՝ 96.5 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում արտահանվում է պղնձի հանքաքար), Իրան՝ 51.8 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում արտահանվում է էլեկտրաէներգիա), Նիդեռլանդներ՝ 46.4 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում արտահանվում է երկաթամիահալվածք և պղինձ), Բելգիա՝ 25.7 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում արտահանվում է ադամանդ և ցինկի հանքաքար), Գերմանիա՝ 17.7 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում արտահանվում է պղինձ, երկաթամիահալվածք և մոլիբդեն), ԱՄՆ՝ 15.7 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում արտահանվում է ալյումինե փայլաթիթեղ) և Չինաստան՝ 13.0 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում արտահանվում է մոլիբդենի և պղնձի հանքաքար): Միևնույն ժամանակ, նվազել են արտահանման ծավալները Շվեյցարիա՝ 8.3 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում արտահանվում է պղնձի հանքաքար), Կանադա՝ 4.5 մլն ԱՄՆ դոլար (հիմնականում արտահանվում է անմշակ ոսկի), Վրաստան՝ 3.8 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում արտահանվում են ապակյա իրեր, բնական գազ, ցեմենտ, սուրճ և պլաստմասսայե» իրեր):

Գծապատկեր 3. Արտահանման կառուցվածքն ըստ հիմնական երկրների (2010 թ.)



2010 թվականին, նախորդ տարվա համեմատ, գրեթե չի փոխվել արտահանման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը[13] և կազմել է 30.7 %՝ նախորդ տարվա 29.6 %-ի փոխարեն:

Աղյուսակ 5. Արտահանման աշխարհագրական բևեռացումը ըստ ապրանքի ծագման երկրի (%)

Տարեթիվ	2005	2006	2007	2008	2009	2010
Աշխարհագրական բևեռացում	31.6	30.1	30.7	32.7	29.6	30.7

Ապրանքների ներմուծում

2010 թվականին ապրանքների ներմուծումը (դեբետ) կազմել է 3208.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 13.4 %-ով: Տարվա ընթացքում աճ է գրանցվել գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով: Մասնավորապես, 125.5 մլն ԱՄՆ դոլարով կամ 23.2 %-ով ավելացել են «Հանքահումքային մթերքներ», 55.6 մլն ԱՄՆ դոլարով կամ 23.0 %-ով՝ «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», 51.5


[13] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*

$$K=\frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100$$ *որտեղ՝*

K-ն բևեռացման գործակիցն է,
X_i-ը՝ արտահանման (ներմուծման) ծավալն է i երկիր,
X –ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը:

մլն ԱՄՆ դոլարով կամ 48.0 %-ով՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր», 44.2 մլն ԱՄՆ դոլարով կամ 16.7 %-ով՝ «Պատրաստի սննդի արտադրանք», 30.2 մլն ԱՄՆ դոլարով կամ 32.8 %-ով՝ «Մանածագործական իրեր», 23.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 3.7 %-ով՝ «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», 20.7 մլն ԱՄՆ դոլարով կամ 8.2 %-ով՝ «Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» և 18.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 13.9 %-ով՝ «Պլաստմասսա և դրանից իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալները:

Գծապատկեր 4. Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի



2009 թվականի համեմատ ներմուծումը ավելացել է 12.9%-ով (ըստ առևտրի վիճակագրության), ընդ որում՝ ֆիզիկական ծավալների ավելացման հաշվին՝ 13.6%-ով (գների փոփոխության հաշվին այն նվազել է 0.7%-ով): Սա պայմանավորված է Հայաստանի տնտեսության հետճգնաժամային աշխուժացման արդյունքում համախառն պահանջարկի աճով: Արձանագրվել է գրեթե բոլոր ապրանքախմբերի ֆիզիկական ծավալների աճ և գների նվազում: Զգալի աճ է արձանագրվել «Թանկարժեք քարեր և մետաղներ» ապրանքախմբի մասով՝ գները նվազել են 3.5%-ով, իսկ ֆիզիկական ծավալներն աճել են 51.5%-ով: Սա բացատրվում է նրանով, որ այս ապրանքախմբում մեծ կշիռ ունեցող ադամանդե քարերի և անմշակ ոսկու ներմուծումը զգալիորեն ավելացել է: Զգալի ավելացել է նաև «Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն» ապրանքախմբի ներմուծումը. գները նվազել են 10.8%-ով, իսկ ֆիզիկական ծավալներն ավելացել են 45.0%-ով:

Աղյուսակ 6. Ներմուծման գնի և ծավալի փոփոխությունը (%) [14]

Ապրանքախումբ	2009			2010		
	Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխությունները՝ կապված		Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխությունները՝ կապված	
		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ
Ընդամենը	**-25.0**	**-18.5**	**-6.5**	**12.9**	**13.6**	**-0.7**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն [7]	-36.6	-29.9	-6.7	34.2	45.0	-10.8
Թանկարժեք քարեր և մետաղներ	-64.8	-57.4	-7.4	48.0	51.5	-3.5
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ [8]	-19.3	-16.4	-2.9	17.3	10.7	6.6
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	-10.3	-0.6	-9.7	-2.0	-2.8	0.8
Գյուղատնտեսական մթերքներ [9]	-19.5	-13.0	-6.5	10.1	12.3	-2.2
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ [10]	-27.6	-16.8	-10.8	10.1	17.1	-7.0
Այլ ապրանքներ [11]	-23.2	-15.9	-7.3	8.0	15.8	-7.8


[14] *Ներմուծման գները ՀՀ ԿԲ-ն հաշվարկել է ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշով կազմված տվյալների:*

Ի տարբերություն արտահանման, ներմուծվող ապրանքախմբերի ցրվածությունն ավելի մեծ է: Այդ է վկայում նաև արտահանման նկատմամբ ներմուծման համեմատաբար ցածր բևեռացման ցուցանիշը, ինչը նախորդ տարվա համեմատությամբ գրեթե չի փոխվել և կազմել է 31.7 %: Բևեռացման ցածր ցուցանիշը հետևանք է այն բանի, որ տարիների ընթացքում ավելանում է Հայաստան ապրանքներ ներմուծող գործընկեր երկրների թիվը՝ նվազեցնելով երկրի կախվածությունը այս կամ այն երկրի անբարենպաստ տնտեսական միջավայրի հնարավոր ազդեցություններից:

Աղյուսակ 7. Ներմուծման ապրանքային բևեռացումը (%) [12]

Տարեթիվ	2005	2006	2007	2008	2009	2010
Ապրանքային բևեռացում	32.9	31.3	31.0	30.5	32.0	31.7

Գծապատկեր 5. Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքների ծագման հիմնական երկրների (2010 թ.)



Ըստ ներմուծվող ապրանքների ծագման երկրի հատկանիշի՝ ԱՊՀ անդամ երկրներից ներմուծումն ավելացել է 100.4 մլն ԱՄՆ դոլարով: Ավելացել է ներմուծումը Ռուսաստանի Դաշնությունից՝ 43.0 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում է բնական և հեղուկ գազ, չմշակված ալյումին, ցորեն, նավթ ու նավթամթերք), Ուկրաինայից՝ 28.0 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում են երկաթյա ձողեր, սիգարետ ու սիգար, շոկոլադ և արևածաղկի ձեթ), Թուրքմենստանից՝ 11.4 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում է նավթ և նավթամթերք), Ղազախստանից՝ 8.7 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում են երկաթյա հարթ գլանվածքներ և ցորեն): Եվրոմիության անդամ երկրներից ներմուծումն ավելացել է. Գերմանիայից՝ 34.7 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում են դեղամիջոցներ, բեռնատար ու մարդատար ավտոմեքենաներ, հեռախոսային ու հեռագրային ապարատներ, մոդեմներ), Ռումինիայից՝ 26.1 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում է նավթ և նավթամթերք), Հունաստանից՝ 20.1 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում են նավթ ու նավթամթերք և ցիտրուսային պտուղներ): Ավելացել է նաև Չինաստանից ներմուծումը՝ 119.4 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում են հեռախոսային և հեռագրային ապարատներ, մոդեմներ, կահույքի մասեր), Իրանից՝ 37.5 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում է բնական և հեղուկ գազ, նավթավերամշակումից ստացված մնացուկ, նավթ ու նավթամթերք) և Թուրքիայից՝ 32.7 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում են մանածագործական իրեր, քիմիական արտադրության ապրանքներ և փայտյա իրեր): Միևնույն ժամանակ, նվազել է ներմուծումը Շվեյցարիայից՝ 53.6 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում են անմշակ ոսկի, մեքենաներ ու սարքավորումներ), Ֆինլանդիայից՝ 19.2 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում են հեռախոսային և հեռագրային ապարատներ, մոդեմներ) և ԱՄՆ-ից՝ 9.9 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում ներմուծվում են ընտանի թռչնի միս, մսամթերք, ավտոուղեհարթիչ, միաշերեփ բեռնիչ, տոփանիչ, բեռնատար ու մարդատար ավտոմեքենաներ)[15]:

[15] *Նշված երկրներից ապրանքների ներմուծումը հաշվարկված է ըստ ծագման երկրի հատկանիշով կազմված տվյալների:*

2010 թվականին ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշի՝ ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը նախորդ տարվա համեմատ մի փոքր նվազել է և կազմել 28.5 %, միևնույն ժամանակ համապատասխան ցուցանիշը, հաշվարկված՝ առևտուր անող երկրի հատկանիշի տվյալների հիման վրա, կազմել է 24.8 %:

Աղյուսակ 8. Ներմուծման աշխարհագրական բևեռացումն ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշի (%)[13]

Տարեթիվ	2005	2006	2007	2008	2009	2010
Աշխարհագրական բևեռացում	24.0	23.6	27.9	26.3	29.1	28.5

Աղյուսակ 9. Ներմուծման աշխարհագրական բևեռացումն ըստ առևտուր անող երկրի հատկանիշի (%)[13]

Տարեթիվ	2005	2006	2007	2008	2009	2010
Աշխարհագրական բևեռացում	24.8	24.9	25.1	24.7	24.4	24.8

Հայաստանում ներմուծման միջին հակվածության ցուցանիշը՝ ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությունը, 2010 թվականին աճել է՝ պայմանավորված դոլարային արտահայտությամբ ընթացիկ գներով համախառն ներքին արդյունքի աճի տեմպերի նկատմամբ ապրանքների և ծառայությունների ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով: Ընդ որում, դոլարային արտահայտությամբ ընթացիկ գներով համախառն ներքին արդյունքի աճը կազմել է 10%, իսկ դրամային արտահայտությամբ ընթացիկ գներով համախառն ներքին արդյունքի անվանական աճը՝ 13%:

Աղյուսակ 10. Ներմուծման միջին հակվածության ցուցանիշը (%)

Տարեթիվ	2005	2006	2007	2008	2009	2010
Ներմուծման միջին հակվածություն	43.3	39.7	39.0	40.7	42.6	44.9

Աղյուսակ 11. Արտահանման ու ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի օգտագործման ուղղությունների [16]

Ապրանքախումբ	Ծավալ, մլն ԱՄՆ դոլար				Տեսակարար կշիռ, %			
	Արտահանում		Ներմուծում		Արտահանում		Ներմուծում	
	2009	2010	2009	2010	2009	2010	2009	2010
Սպառողական ապրանքներ	36.1	38.6	443.7	540.4	5.2	3.8	13.9	14.9
Սթերք և խմիչքներ	117.7	147.9	505.9	548.3	16.9	14.5	15.8	15.1
Արդյունաբերական պաշարներ	488.2	725.7	945.3	1060.8	70.1	71.0	29.6	29.3
Վառելիք և վառելանյութ	19.7	71.0	514.4	638.2	2.8	6.9	16.1	17.6
Կապիտալ ապրանքներ	24.3	35.7	573.6	609.2	3.5	3.5	18.0	16.8
Տրանսպորտային սարքավորումներ, սարքեր և դրանց մասեր	10.2	2.7	208.9	226.8	1.5	0.3	6.5	6.3
Այլ ապրանքներ	0.0	0.0	0.2	0.3	0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը	**696.3**	**1021.7**	**3192.0**	**3624.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**

Ապրանքների հաշվեկշիռ


Արտաքին ապրանքաշրջանառությունը 2010 թվականին կազմել է մոտ 4383.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 22.5%-ով: Ապրանքների հաշվեկշռի պակասուրդը կազմել է 2032.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.3%-ով, իսկ առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ ապրանքաշրջանառությունը կազմել է 4090.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 21.5%-ով, ապրանքների հաշվեկշռի պակասուրդը՝ 2007.7 մլն ԱՄՆ դոլար:

[16] Ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ցուցանիշներում քաղաքացիների կողմից իրականացված առևտուրն ընդգրկված չէ: Քաղաքացիների կողմից կատարված առևտրում հատկապես մեծ տեսակարար կշիռ ունի մարդատար ավտոմեքենաների ներմուծումը:


Ծառայությունների հաշվեկշիռ

2010թ. ընթացքում «Ծառայություններ» հոդվածի պակասուրդը նվազել է 9.7%-ով՝ կազմելով 242.2 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 268.1 մլն ԱՄՆ դոլար): «Ծառայություններ» հոդվածի բացասական հաշվեկշռի նվազումը հիմնականում պայմանավորված է համակարգչային ու տեղեկատվական ծառայությունների և կապի ծառայությունների դրական հաշվեկշիռների համապատասխանաբար 20.2 մլն և 9 մլն ԱՄՆ դոլար աճով (52.6% և 25.9%): Ընդ որում՝ համակարգչային ծառայությունների հաշվեկշռի դրական մնացորդը նախորդ տարվա համեմատ ավելացել է 19.6 մլն ԱՄՆ դոլարով (52.3%), իսկ տեսակոմունիկացիոն ծառայությունների հաշվեկշռի դրական ճեղքվածքը ավելացել է 8.3 մլն ԱՄՆ դոլարով (23.4%):

Գծապատկեր 6. Արտահանվող ծառայությունները 2006 - 2010 թթ.



Գծապատկեր 7. Ներմուծվող ծառայությունները 2006 - 2010 թթ.



2010 թվականին Հայաստանում աճել է տնտեսության բացվածության ցուցանիշը[17] և կազմել մոտ 65.6%: Ցուցանիշի նման աճը հիմնականում պայմանավորված է դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի համեմատ ապրանքների ու ծառայությունների արտաքին շրջանառության առաջանցիկ աճի տեմպերով:

[17] *Բացվածության ցուցանիշը = (ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման գումար (արտաքին առևտրի շրջանառություն) x 100 / ՀՆԱ):*

Աղյուսակ 12. Բացվածության ցուցանիշը (%)

Տարեթիվ	2005	2006	2007	2008	2009	2010
Բացվածության ցուցանիշ	72.2	63.4	58.3	55.8	58.1	65.6


Բացվածության ցուցանիշի առանձին բաղադրատարրերի՝ արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները հնարավորություն են տալիս հասկանալու, թե ցուցանիշի դինամիկան կոնկրետ որ բաղադրատարրով է պայմանավորված: Հայաստանում, օրինակ՝ փոքր են ինչպես արտահանում/ՀՆԱ, այնպես էլ ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները:

Եկամուտների հաշվեկշիռ

2010 թվականին «Եկամուտներ» հոդվածի հավելուրդը կազմել է 338.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 172.1 մլն ԱՄՆ դոլարով: Աճի հիմնական պատճառը արտերկրում գտնվող սեզոնային աշխատողների եկամուտների ավելացումն է 241.9 մլն ԱՄՆ դոլարով: Քանի որ 2010թ. ընթացքում միջազգային տոկոսադրույքները շարունակել են ցածր մնալ, պաշտոնական պահուստների կառավարումից ստացվող եկամուտները նույնպես ցածր են եղել և կազմել են 26.9 մլն ԱՄՆ դոլար:

«Եկամուտներ» հոդվածի՝ դեպի դուրս փոխանցումների մեջ, ինչպես վերջին 4 տարիներին, այս տարի ևս զգալի են եղել ուղղակի ներդրմամբ ձեռնարկություններում ոչ ռեզիդենտների կողմից ստացված և վերաներդրված եկամուտները՝ 258.3 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում՝ չնայած ուղղակի ներդրմամբ ձեռնարկություններում ոչ ռեզիդենտների կողմից ստացված և վերաներդրված եկամուտը փաստացի հոսք չի ենթադրում, սակայն արտացոլվում է ընթացիկ հաշվի համապատասխան հոդվածում և, ի վերջո, ազդում ընթացիկ հաշվի մեծության վրա (մեծացնելով ընթացիկ հաշվի պակասուրդը) (աղյուսակ 16): Ուղղակի ներդրումներից եկամուտների արտահոսքի մեջ այս տարի նկատվել է աճ «Շահաբաժիններ» հոդվածում՝ անցյալ տարվա 49.9 մլն ԱՄՆ դոլարից դառնալով 101.6 մլն ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 8. Եկամուտների հաշվեկշիռը 2005 - 2010 թթ.



Ընթացիկ տրանսֆերտներ

Ընթացիկ տրանսֆերտների զուտ ներհոսքը կազմել է 562.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 251.0 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում՝ ընթացիկ տրանսֆերտների նման նվազումը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է մասնավոր հատվածի տրանսֆերտների նվազմամբ՝ 256.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 34.9 %-ով: Պետական ընթացիկ տրանսֆերտների զուտ ներհոսքը 2010-ին աճել է 5.1 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 85.8 մլն ԱՄՆ դոլար, որից 48.4 մլն ԱՄՆ դոլարը մարդասիրական օգնությունն է, 26.2 մլն ԱՄՆ դոլարը՝ տեխնիկական օգնությունը, իսկ 14.9 մլն ԱՄՆ դոլարը՝ ֆինանսական օգնությունը: Զուտ մասնավոր տրանսֆերտները կազմել են 477.1 մլն ԱՄՆ դոլար:

2010 թվականին ՀՀ բանկային համակարգով ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումների ներհոսքը կազմել է 1293.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտահոսքը՝ 221.8 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ ներհոսքն ավելացել է 15.1%-ով, իսկ արտահոսքը՝ 13.8%-ով): Փոխանցումների ինչպես ներհոսքում, այնպես էլ արտահոսքում զգալի կշիռ ունեն Ռուսաստանն ու ԱՄՆ-ն. ներհոսքում՝ համապատասխանաբար 82.1% և 5.2%, իսկ արտահոսքում՝ 52.7% և 11.1%:

Աղյուսակ 13. Մասնավոր հատվածի ընթացիկ տրանսֆերտների, սեզոնային աշխատողների աշխատավարձի և կապիտալ տրանսֆերտների ներհոսքը 2007 - 2010 թվականներին (մլն ԱՄՆ դոլար)


Ցուցանիշ	2007	2008	2009	2010
Սեզոնային աշխատողների աշխատավարձ[18]	742.7	929.2	677.0	918.9
Մասնավոր ընթացիկ տրանսֆերտներ	927.6	1161.3	810.7	694.2
Մասնավոր կապիտալ տրանսֆերտներ	76.2	92.0	60.9	70.1
Ընդամենը	**1746.5**	**2182.5**	**1548.6**	**1683.2**

Աղյուսակ 14. Մասնավոր հատվածի ընթացիկ տրանսֆերտների և սեզոնային աշխատողների աշխատավարձի (զուտ) տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)

Երկիր	2005	2006	2007	2008	2009	2010
Հայաստան	15.4	16.6	15.5	15.6	14.8	13.3

ՀՀ վճարային հաշվեկշռի «Եկամուտներ» և «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածները, ինչպես և նախկինում, 2010 թվականին ևս հանդիսացել են «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների բացասական ճեղքվածքի ֆինանսավորման հիմնական աղբյուրներ: Ընդ որում՝ նշված հոդվածների միջոցով ֆինանսավորվել է ապրանքների ու ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդի 39.6%-ը (նախորդ տարի՝ 41.7%-ը):

Գծապատկեր 9. Ընթացիկ հաշվի տարրերը



[18] *Սեզոնային աշխատողների աշխատավարձի զգալի աճը և ընթացիկ տրանսֆերտների նշանակալի նվազումը նոր հետազոտության արդյունքում ստացված կշիռների կիրառման հետևանք է:*

Աղյուսակ 15. Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)

Երկիր	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Ադրբեջան	-29.8	1.3	17.7	27.3	33.7	23.0	29.0
Էստոնիա	-11.4	-10.1	-15.6	-17.3	-10.0	3.8	3.5
Լատվիա	-12.9	-12.3	-22.7	-22.3	-13.3	8.8	3.6
Լիտվա	-7.7	-7.1	-10.7	-14.6	-12.2	4.5	1.8
Հայաստան	-0.5	-1.1	-1.8	-6.4	-11.8	-15.8	-14.7
Ղազախստան	0.8	-1.8	-2.5	-7.9	4.7	-4.0	3.1
Ղրղզստան	1.3	-1.6	-10.1	-5.9	-13.8	2.3	4.1
Մոլդովա	-1.8	-8.3	-11.5	-15.3	-16.3	-8.7	-9.0
ՌԴ	10.1	11.0	9.6	6.0	6.2	4.0	4.8
Վրաստան	-6.9	-11.1	-15.1	-19.8	-22.8	-11.2	-9.6
Ուկրաինա	10.7	2.9	-1.5	-3.7	-7.1	-1.5	-2.1
Միջին	-4.4	-3.5	-5.8	-7.3	-5.7	0.5	1.3

2010թ. ընթացքում նախկին ԽՍՀՄ երկրներում շարունակվել է 2009թ. ընթացքում ձևավորված ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցության դրականացման միտումը, որը հիմնականում պայմանավորված է ապրանքների և ծառայությունների արտաքին շրջանառության ծավալների կրճատմամբ՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության ներքո: Մերձբալթյան որոշ երկրներում ընթացիկ հաշվի մնացորդ/ՀՆԱ հարաբերակցությունը դեռևս շարունակում է դրական մնալ, սակայն 2010թ. ունեցել է նվազման միտում՝ հիմնականում պայմանավորված ապրանքների ու ծառայությունների ներմուծման ավելացման հետ: Ղազախստանում, Ադրբեջանում և ՌԴ-ում վերոնշյալ ցուցանիշն աճել է՝ կապված միջազգային շուկաներում վառելիքի գների աճի հետ:

Ընդհանրապես, ընթացիկ հաշվի բացասական մեծության վրա նաև ազդում է նախկինում կատարված օտարերկրյա ներդրումների դիմաց ստացված և վերաներդրված եկամուտների աճը, ինչը թեև փաստացի հոսք չի ենթադրում և պարզապես հաշվարկային մեծություն է, սակայն ազդում է ընթացիկ հաշվի պակասուրդի մեծության վրա, քանի որ ըստ վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության՝ գրանցվում է «Եկամուտներ» հոդվածում, որի հակառակ գրանցումն արտացոլվում է ֆինանսական հաշվի «Ուղղակի ներդրումներ» բաժնում: Այսինքն՝ քանի որ նշված միջոցներն իրականում դուրս չեն գալիս երկրից, կարելի է ընթացիկ հաշվի պակասուրդը դիտարկել նաև առանց նշված՝ «Վերաներդրված եկամուտ» հոդվածի, քանի որ այն երկրներում, որտեղ օտարերկրյա ներդրումներն ու դրանցից ստացված եկամուտները զգալի են, բնականաբար զգալիորեն փոխվում է ընթացիկ հաշվի պակասուրդի մեծությունը, և առաջանում է ընթացիկ հաշվի պակասուրդի «ուռճացման» խնդիր:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ վերլուծական նպատակներով կարելի է որպես ընթացիկ հաշվի պակասուրդ դիտարկել առանց վերաներդրված եկամտի ընթացիկ հաշվի պակասուրդը:

Աղյուսակ 16. Հայաստանում վերաներդրված եկամուտները (մլն ԱՄՆ դոլար) և ընթացիկ հաշվի (առանց վերաներդրված եկամտի) տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %


Երկիր	2005	2006	2007	2008	2009	2010
Վերաներդրված եկամուտ, մլն ԱՄՆ դոլար	155.2	193.9	250.2	208.1	265.1	258.3
Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	-1.1	-1.8	-6.4	-11.8	-15.8	-14.7
Ընթացիկ հաշվի (առանց վերաներդրված եկամտի) տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	2.1	1.2	-3.7	-10.1	-12.8	-11.9

Ըստ աղյուսակ 16-ում ներկայացված տվյալների՝ Հայաստանում զգալի են վերաներդրված եկամտի չափերը, ինչը բացառելու դեպքում նկատվում է ընթացիկ հաշվի պակասուրդի զգալի կրճատում, իսկ 2005 – 2006 թվականներին՝ արդեն նույնիսկ հավելուրդ: 2007 թվականից սկսած՝ ընթացիկ հաշիվը կրկին բացասական է դարձել՝ պայմանավորված ներմուծման աճի բարձր տեմպերով: 2010 թ. միայն ապրանքների ներմուծումը կազմել է ընթացիկ հաշվի համախառն արտահոսքի մոտ 63.5%-ը (նախորդ տարի՝ մոտ 65.6%-ը):

ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

2010 թվականին կապիտալի և ֆինանսական հաշիվը կազմել է 1355.7 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 1349.5 մլն ԱՄՆ դոլար): Ֆինանսական հաշվի նախորդ տարվա ցուցանիշը գրեթե պահպանվել է և կազմել է 1247.8 (նախորդ տարի՝ 1260.4), իսկ կապիտալի և ֆինանսական հաշվի աճը գրեթե ծածկել է ընթացիկ հաշվի պակասուրդը: Կենտրոնական բանկի պահուստները նվազել են 111.5 մլն ԱՄՆ դոլարով:

Գծապատկեր 10. ՀՀ վճարային հաշվեկշռի կապիտալի ու ֆինանսական հաշվի բաղադրատարրերը 2006 - 2010 թթ.



ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ

Կապիտալի հաշվի հիմնական բաղադրատարր հանդիսացող կապիտալ տրանսֆերտները տարվա ընթացքում կազմել են 107.9 մլն ԱՄՆ դոլար: Նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է 21.1 %-ով կամ 18.8 մլն ԱՄՆ դոլարով՝ պայմանավորված ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կապիտալ տրանսֆերտների համապատասխանաբար 11.9 և 6.9 մլն ԱՄՆ դոլարով ավելացմամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Որպես վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի՝ 2010 թվականին դրսևորված առանձնահատկություն նախորդ տարվա համեմատ կարելի է նշել ուղղակի ներդրումների, այլ ներդրումների և պահուստային ակտիվների զգալի նվազումը՝ նշված հոսքերը համապատասխանաբար կազմել են 561.8, 563.7 և 111.5 մլն ԱՄՆ դոլար:


Աղյուսակ 17. Ֆինանսական հաշվի կառուցվածքը (ծավալը՝ մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	**2007**	**2008**	**2009**	**2010**
Ուղղակի ներդրումներ (զուտ)	700.9	925.2	724.8	561.8
Պորտֆելային ներդրումներ (զուտ)	-9.2	8.4	-3.9	10.7
Այլ ներդրումներ (զուտ)	303.1	53.3	1139.8	563.7
Պահուստային ակտիվների փոփոխություն	-546.2	233.5	-600.3	111.5
Ընդամենը	**448.7**	**1220.4**	**1260.4**	**1247.8**

Ուղղակի ներդրումներ

2010 թվականին ուղղակի ներդրումների ներհոսքը նախորդ տարվա համեմատ նվազել է 163.0 մլն ԱՄՆ դոլարով (22.5 %-ով) և կազմել 561.8 մլն ԱՄՆ դոլար (զուտ): Մոտ 8.3 մլն ԱՄՆ դոլարով ավելացել են արտերկրներում ուղղակի ներդրումների ծավալները, միևնույն ժամանակ 570.1 մլն ԱՄՆ դոլարով ավելացել են Հայաստանում կատարված ուղղակի ներդրումները: Ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ ձեռնարկությունների բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի ներդրումները կազմել են 143.2 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 470.5 մլն ԱՄՆ դոլար), 258.3 մլն ԱՄՆ դոլարը նախկինում կատարված ուղղակի ներդրումների արդյունքում ձեռնարկություններում վերաներդրված շահույթն է (նախորդ տարի կազմել էր 265.1 մլն ԱՄՆ դոլար), միևնույն ժամանակ, 168.6 մլն ԱՄՆ դոլարով աճել են միջֆիրմային վարկերը (նախորդ տարի աճը կազմել էր 41.9 մլն ԱՄՆ դոլար): 2010 թվականին բանկային համակարգում ուղղակի ներդրումներն ավելացել են 117.6 մլն ԱՄՆ դոլարով՝ նախորդ տարվա 111.8 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն:

Գծապատկեր 11. Զուտ ուղղակի ներդրումները 2006 – 2010 թթ.



Ուղղակի ներդրումները տարվա ընթացքում իրականացվել են հիմնականում Ռուսաստանի, Ֆրանսիայի և Արգենտինայի ներդրողների կողմից (ուղղակի ներդրումների համապատասխանաբար 40.3%-ը, 30.4%-ը և 6.2%-ը): Ընդ որում՝ Ռուսաստանն ուղղակի ներդրումներն իրականացրել է էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և լավորակ օդի մատակարարման, հեռահաղորդակցության, ցամաքային տրանսպորտի գործունեության և խողովակաշարերով փոխադրման (համապատասխանաբար 49.6%-ը, 28.5%-ը և 19.5%-ը), Ֆրանսիան՝ հեռահաղորդակցության, իսկ Արգենտինան՝ օդային տրանսպորտային գործունեության ոլորտում:

Աղյուսակ 18. Ուղղակի ներդրումներ (հաշվետու երկրում) / ՀՆԱ (%)

Երկիր	2005	2006	2007	2008	2009	2010
Ադրբեջան	33.8	21.3	13.0	8.2	6.5	6.5
Էստոնիա	21.4	10.8	12.7	7.4	9.9	8.0
Լատվիա	4.4	8.3	8.0	4.0	0.4	1.4
Լիտվա	4.0	6.1	5.2	3.9	0.3	1.7
Հայաստան	4.9	7.1	7.6	8.0	9.0	6.1
Ղազախստան	3.5	7.8	10.6	11.8	12.6	7.2
Ղրղզստան	1.7	6.4	5.4	7.4	4.1	5.1
Մոլդովա	6.4	6.8	12.3	11.7	2.4	3.4
ՌԴ	1.7	3.0	4.2	4.5	3.2	2.9
Վրաստան	7.1	15.1	17.2	12.2	6.1	4.7
Ուկրաինա	9.1	5.2	6.9	6.1	4.1	4.7
Միջին *(առանց Ադրբեջանի)*	***6.4***	***7.7***	***9.0***	***7.7***	***5.2***	***4.5***
Միջին	***8.9***	***8.9***	***9.4***	***7.8***	***5.3***	***4.7***

Նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը 2010 թվականին, 2009 թվականի համեմատությամբ, հիմնականում ունեցել է նվազման միտումներ: Նվազման հիմնական պատճառը, թերևս, հանդիսացել է այդ երկրներում ՀՆԱ-ի ծավալների առավել առաջանցիկ աճի տեմպը՝ ուղղակի ներդրումների աճի տեմպի նկատմամբ: Նախորդ տարվա համեմատությամբ ուղղակի ներդրումների ներհոսքի էական նվազում է արձանագրվել Ղազախստանում (28%), Հայաստանում (27%), Էստոնիայում (20%) և Վրաստանում (17%), իսկ մնացած երկրներում տեղի է ունեցել ուղղակի ներդրումների ներհոսքի ծավալների աճ:

Պորտֆելային ներդրումներ

2010 թվականին գրանցվել է 10.7 մլն ԱՄՆ դոլարի պորտֆելային ներդրումների զուտ ներհոսք նախորդ տարվա 3.9 մլն ԱՄՆ դոլար զուտ արտահոսքի փոխարեն: Այս փոփոխության պատճառը պարտավորությունների աճն է 12.2 մլն ԱՄՆ դոլարով:

Այլ ներդրումներ

2010 թվականին «Այլ ներդրումների» զուտ աճը կազմել է 563.7 մլն ԱՄՆ դոլար՝ 2009 թվականի 1139.8 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն, որը պարտավորությունների կրճատման հետևանք է, ինչը բացատրվում է նրանով, որ նախորդ տարվա համեմատ զգալիորեն կրճատվել են պետական կառավարման և դրամավարկային մարմինների կողմից ներգրավված վարկերը:

Պետական կառավարման մարմիններ

2010 թվականին ՀՀ պետական կառավարման մարմինների արտաքին պարտավորությունների զուտ աճը կազմել է 287.2 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 1043.7 մլն ԱՄՆ դոլար):

Ընդ որում, պետական հատվածի վարկերի ներհոսքը տարվա ընթացքում կազմել է 287.0[19] մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 1064.7 մլն ԱՄՆ դոլար): Ներհոսքի 32.8%-ը կազմել են Արժույթի միջազգային հիմնադրամի (նախորդ տարի՝ 14.8%), 31.0%-ը՝ Համաշխարհային բանկի և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի (նախորդ տարի՝ 15.9%), 7.8%-ը՝ Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրված վարկերը:

Տարվա ընթացքում պետական հատվածի վարկերի մարումը կազմել է 24.8 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 20.9 մլն ԱՄՆ դոլար), իսկ վճարված տոկոսավճարները՝ 36.9 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 22.0 մլն ԱՄՆ դոլար):

Բանկեր


Առևտրային բանկերի զուտ ներդրումային դիրքը[20] նվազել է 380.4 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում՝ արտաքին ակտիվներն աճել են 5.4 մլն ԱՄՆ դոլարով, իսկ պարտավորությունները՝ 385.8 մլն ԱՄՆ դոլարով: Ակտիվներում առևտրային բանկերի՝ արտասահմանյան բանկերում ունեցած ավանդների նվազումը գերազանցել է ՀՀ բանկերի ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճը: Այսպես, ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերն ավելացել են 57.5 մլն ԱՄՆ դոլարով, ընդ որում՝ դրանից 49.6 մլն ԱՄՆ դոլարը բաժին է ընկել կարճաժամկետ վարկերին, իսկ ՀՀ առևտրային բանկերի ավանդներն արտասահմանյան բանկերում նվազել են 66.4 մլն ԱՄՆ դոլարով: Պարտավորությունների զգալի աճը պայմանավորված է ՀՀ առևտրային բանկերում ոչ ռեզիդենտների ուղղակի ներդրումների ավելացմամբ՝ 117.6 մլն ԱՄՆ դոլարով, ինչպես նաև ոչ ռեզիդենտներից 190.6 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկերի ներգրավմամբ (ի տարբերություն 2009-ի, երբ ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերը նվազել էին մոտ 90 մլն ԱՄՆ դոլարով), ընդ որում՝ ներգրավված վարկերի 150.3 մլն ԱՄՆ դոլարը բաժին է ընկել երկարաժամկետ վարկերին:

---

[19] Ներառում է միայն փաստացի ստացումները:

[20] Ըստ վճարային հաշվեկշռի: Ի տարբերություն դրամավարկային վիճակագրության, վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության համաձայն, առևտրային բանկերի արտաքին ակտիվներ և պարտավորություններ ձևավորող գործառնությունների փոփոխությունը հաշվարկվում է առանց վերագնահատման և ներառում է ոչ փոխարկելի արտարժույթով գործառնությունները: Ընդ որում՝ վճարային հաշվեկշռում բանկային համակարգի մեջ ներառվում են նաև վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների ու պարտավորությունների հետ կապված գործառնությունները:

Գծապատկեր 12. Առևտրային բանկերի զուտ ներդրումային դիրքը 2005-2010 թվականներին[21]



Աղյուսակ 19. Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվները (մլն ԱՄՆ դոլար)

Երկիր	2006	2007	2008	2009	2010
Հայաստան	8.5	-308.8	-615.5	-357.1	-621.6

Մասնավոր հատված (առանց առևտրային բանկերի)

Տարվա ընթացքում մասնավոր հատվածի այլ ներդրումներն ավելացել են 47.7 մլն ԱՄՆ դոլարով, ընդ որում՝ ակտիվներն ավելացել են մոտ 239.0 մլն ԱՄՆ դոլարով, իսկ պարտավորությունները՝ 191.4 մլն ԱՄՆ դոլարով: Կանխիկ արտարժույթի ներհոսքը ևս զգալի չի եղել և կազմել է 203.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 36.8 մլն ԱՄՆ դոլարով: Նախորդ տարվա համեմատ կանխիկ արտարժույթի ծավալների նվազումը պայմանավորված էր կանխիկ տեսքով ստացվող մասնավոր տրանսֆերտների ներհոսքի նվազմամբ: Հետագա վճարման պայմանով արտահանված ապրանքների ծավալները՝ առևտրային վարկերի ակտիվային մասը, նախորդ տարվա համեմատ աճել են և կազմել 12.5 մլն ԱՄՆ դոլար: Հետագա վճարման պայմանով իրականացված արտահանումը կազմել է ապրանքների արտահանման 1.1%-ը (նախորդ տարի՝ 1.2%-ը):

Պարտավորությունների մասով զգալիորեն նվազել է առևտրային վարկերի միջոցով ներմուծումը՝ նախորդ տարվա համեմատ՝ շուրջ 35.8 մլն ԱՄՆ դոլարով: Նշված ցուցանիշը կազմել է 2010 թվականի ապրանքների ներմուծման 0.4%-ը (նախորդ տարի՝ 1.8 %-ը): Արտաքին աշխարհից ձեռնարկությունների կողմից ներգրավված վարկերը կազմել են 164.3 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 112.9 մլն ԱՄՆ դոլար): Ընդ որում՝ նշված վարկերը ներգրավվել են հիմնականում «էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և լավորակ օդի մատակարարում», «Հեռահաղորդակցություն» և «Ցամաքային տրանսպորտի գործունեություն և խողովակաշարային փոխադրում» ճյուղերում:

Կենտրոնական բանկ

Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները 2010 թվականին ավելացել են 71.8 մլն ԱՄՆ դոլարով՝ նախորդ տարվա 448.1 մլն ԱՄՆ դոլար աճի փոխարեն: 2010 թ. ընթացքում իրականացվել են 27.0 մլն ԱՄՆ դոլարի վճարումներ (նախկին վարկերի մարումներ), ստացվել են 94.5 մլն ԱՄՆ դոլարի նոր բաշխումներ՝ ԱՄՀ «Սթենդ-բայ» և ԸՖԳ (EFF) և 5 մլն ԱՄՆ դոլար՝ Համաշխարհային բանկի՝ Փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսավորման մատչելիություն ծրագրերի շրջանակներում:


2010 թ. ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստները նվազել են 111.5 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջի դրությամբ կազմել 1865.8 մլն ԱՄՆ դոլար: Տարվա ընթացքում Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի շուկայում արտարժույթի զուտ վաճառքը կազմել է 57.1 մլն ԱՄՆ դոլար:

[21] *Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների զուտ ներդրումային դիրքը ժամանակահատվածի վերջի դրությամբ ներառում է նաև վերագնահատումը:*

Կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստների համարժեքությունը գնահատող ցուցանիշները ունեցել են հետևյալ դինամիկան:

Ներմուծման ծածկույթի ցուցանիշը տարվա ընթացքում կազմել է 5.3 ամիս՝ նվազելով նախորդ տարվա 6.6 ամիս ցուցանիշի համեմատ: Պատճառը մի կողմից՝ միջազգային պահուստների նվազումն է նախորդ տարվա համեմատ, մյուս կողմից՝ ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալների 14.2 % աճը: Իսկ եթե այս ցուցանիշի հաշվարկում ներառենք նաև ֆինանսական գործիքների գծով գնահատված հոսքերը, ապա 2010 թվականի համար նշված ցուցանիշը կկազմի 4.4 ամիս՝ նախորդ տարվա 5.4 ամիս ցուցանիշի փոխարեն: Նշենք, որ միջազգային պրակտիկայում զարգացող երկրների համար որպես ներմուծման ծածկույթի ցուցանիշի ընդունելի սահման է համարվում 3 ամսվա նշագիծը և հիմնականում պետք է պահպանվի հատկապես այն երկրներում, որոնց մուտքը միջազգային կապիտալի շուկաներ սահմանափակ է:

Գծապատկեր 13. Համախառն արտաքին պահուստները և ներմուծման ծածկույթը



Համախառն արտաքին պահուստների բավարարության գնահատման մյուս կարևորագույն ցուցանիշը համախառն արտաքին պահուստներ/դրամային զանգված ցուցանիշն է, որը ցույց է տալիս, թե ինչպիսին է ամբողջ դրամային զանգվածն արտարժույթով փոխարկելու հնարավորությունը՝ կապիտալի հնարավոր արտահոսքի պայմաններում: Նշված ցուցանիշը 2010 թ. կազմել է 130%՝ նախորդ տարվա 168%-ի փոխարեն: Ընդունելի նշագիծ է համարվում դրամային զանգվածում պահուստների 5 - 20% մակարդակը:

Աղյուսակ 20. Համախառն արտաքին պահուստներ/դրամային զանգված (%)

Երկիր	2005	2006	2007	2008	2009	2010
Համախառն արտաքին պահուստներ / դրամային զանգված	136	114	90	81	168	130

Միջազգային ներդրումային դիրք

2010 թվականի վերջի դրությամբ Հայաստանի զուտ ներդրումային դիրքը, ինչպես նախորդ տարիներին, բացասական էր և կազմել է 5674.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1597.7 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում՝ ակտիվներն ավելացել են 109.0 մլն ԱՄՆ դոլարով, իսկ պարտավորությունները՝ 1706.8 մլն ԱՄՆ դոլարով:

Ըստ ներդրումային դիրքի՝ Կառավարության կողմից ներգրավված վարկերի գծով պարտքը 2010 թվականի վերջի դրությամբ կազմել է 2742.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ ԿԲ վարկերի գծով պարտավորությունները՝ 563.8 մլն ԱՄՆ դոլար: 2010 թ. միջազգային ներդրումային դիրքում առևտրային բանկերի կողմից ներգրավված վարկերն աճել են մոտ 190 մլն ԱՄՆ դոլարով: Ընդհանուր պարտավորությունների շուրջ 3442.1 մլն ԱՄՆ դոլարը (34.4 %) կազմել են պետության պարտավորությունները, իսկ մնացած 6564.3 մլն ԱՄՆ դոլարը (65.6%)՝ մասնավոր հատվածինը, որի մեջ զգալի են ուղղակի ներդրումները (66.1%):


ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների և տնային տնտեսությունների կողմից տնօրինվող կանխիկ արտարժութային միջոցները և ավանդները, ըստ ՀՀ միջազգային ներդրումային դիրքի, կազմել են 1692.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 203.3 մլն ԱՄՆ դոլարով:

Աղյուսակ 21. Հայաստանի միջազգային ներդրումային դիրքը 2009 - 2010 թվականներին (մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշ	Ներդրումային դիրքը 2009թ. վերջին	Ներդրումային դիրքը 2010թ. վերջին
Զուտ ներդրումային դիրքը	-4077.0	-5674.7
Ակտիվներ	4222.6	4331.7
Ուղղակի ներդրումներ արտերկրում	76.7	85.5
Պորտֆելային ներդրումներ	14.1	15.5
Այլ ներդրումներ	2128.1	2364.9
Առևտրային վարկ	39.9	52.4
Վարկեր	195.0	268.7
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	1836.3	1978.4
Այլ ակտիվներ	56.9	65.3
Պահուստային ակտիվներ	2003.7	1865.8
Պարտավորություններ	8299.6	10006.4
Ուղղակի ներդրումներ ՀՀ-ում	3628.2	4338.2
Պորտֆելային ներդրումներ	20.9	33.6
Այլ ներդրումներ	4650.4	5634.6
Առևտրային վարկ	60.5	74.7
Վարկեր	4018.0	4918.8
Դրամավարկային կարգավորման մարմիններ	501.4	563.8
Պետական կառավարման մարմիններ	2471.1	2742.3
Բանկեր	464.2	654.2
Այլ հատվածներ	581.3	958.5
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	382.4	432.9
Այլ պարտավորություններ	189.5	208.1

Եթե դիտարկենք տնտեսության հատվածներն առանձին, ապա կարելի է տեսնել, որ դրական ներդրումային դիրք ունի միայն դրամավարկային կարգավորման հատվածը, իսկ բանկային, պետական և մասնավոր հատվածներն ունեն բացասական ներդրումային դիրք:

Գծապատկեր 14. Տնտեսության հատվածների զուտ ներդրումային դիրքերը 2005 - 2010 թթ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ [1]

Վիճակագրության վարչություն
Անահիտ Սողոյան, Անիկ Ալեքսանյան

ՆԱԽԱԲԱՆ

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը ևս մեկ անգամ ընդգծեց պարտքի, այդ թվում նաև արտաքին պարտքի արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը: Պարտքային խնդիրներ այս անգամ առաջացան առաջին հերթին զարգացած երկրներում, որոնք համարվում էին զերծ նման խնդիրներից, քանի որ ունեն ազատ մուտք ֆինանսական շուկաներ: Ի տարբերություն դրա, զարգացող երկրները, որոնք ունեցել էին խնդիրներ մի քանի տասնամյակ առաջ, ավելի արդյունավետ էին կառավարում իրենց պարտքը, ինչի հետևանքով գրեթե խուսափեցին նման խնդիրներից: Այդ իսկ պատճառով ներկայումս, ինչպես նաև ճգնաժամային տարիներին, կարևորվում է երկրում պարտքի կառավարման խելամիտ կազմակերպումը: Ընդ որում՝ վերջինս պետք է իրականացվի ոչ միայն ճգնաժամի ժամանակ՝ բացասական հետևանքները չեզոքացնելու նպատակով, այլև պետք է կրի անընդհատ բնույթ՝ շարունակվելով նաև հետագա տարիներին: Այս տեսանկյունից Հայաստանում կարևորվում է 2010 թվականին ՀՀ Կառավարության կողմից ընդունված որոշումը՝ պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարության մշակման վերաբերյալ: Վերջինիս նպատակն է նվազեցնել չափից ավելի փոխառությունների բեռը (դրանց առնչվող ծախսերն ու ռիսկերը)՝ հնարավորություն տալով քաղաքականություն մշակողներին ընտրելու ծախսերի և ռիսկերի մի շարք տարբերակներից օպտիմալը: Վերջինիս շրջանակներում ՀՀ Կառավարությունը պետական պարտքի կառավարման գործընթացում շարունակելու է հետևել պարտքի թափանցիկության, գործողությունների հրապարակայնության, ներդրողների վստահության ամրապնդման և հաշվետվողականության սկզբունքներին:

Անդրադառնալով արտաքին պարտքի բեռը գնահատող ցուցանիշներին՝ նշենք, որ 2010 թվականին արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում ցուցանիշը բարելավվել է. այս ցուցանիշի վրա դրական ազդեցություն է ունեցել 2010 թվականին արտահանման բարձր աճի տեմպը: Ինչ վերաբերում է արտաքին պարտք/ՀՆԱ և արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշներին, ապա դրանցից առաջինը վատթարացել է, իսկ երկրորդը՝ բարելավվել, ինչը վկայում է այն մասին, որ 2010 թվականին, ի տարբերություն նախորդ ճգնաժամային տարիների, արտաքին պարտքի աճի մեծ մասը բաժին է ընկել մասնավոր հատվածի պարտքին: Վերջին տարիների ընթացքում մասնավոր հատվածի կողմից ներգրավված միջոցների աճը թեև մեծացնում է պարտքի բեռը (ավելի ցածր է արտոնյալության աստիճանը՝ ի տարբերություն պետական վարկերի), սակայն վկայում է մասնավոր հատվածի՝ արտաքին աշխարհից միջոցներ ներգրավելու հնարավորության մասին: Ինչ վերաբերում է 2010 թվականին, ապա, ինչպես նշվեց, մասնավոր հատվածի պարտքի աճը գերազանցել է պետական հատվածի արտաքին պարտքի աճը: Արդյունքում՝ մասնավոր հատվածի պարտքը 2010 թվականի վերջի դրությամբ կազմել է արտաքին պարտքի գրեթե կեսը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ


Հայաստանի արտաքին պարտքը 2010 թվականի վերջի դրությամբ կազմել է 6288.5 մլն ԱՄՆ դոլար[2], որից 3442.1 մլն ԱՄՆ դոլարը Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին պարտքն է, 1135.4 մլն ԱՄՆ դոլարը՝ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների պարտքը (ներառյալ միջֆիրմային վարկերը), 1711.0 մլն ԱՄՆ դոլարը՝ ոչ բանկ մասնավոր հատվածի պարտքը (ներառյալ միջֆիրմային վարկերը):

---

[1] Նյութում օգտագործված են տվյալներ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային և արտաքին պարտքի դիրքերը» հրապարակումից և ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած տեղեկատվությունից:


[2] 2010 թվականին արտաքին պարտքի վերաբերյալ տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ: Արտաքին պարտքը կազմվել է ԱՄՀ «Արտաքին պարտքի վիճակագրության հավաքագրողների» ձեռնարկում սահմանված մեթոդաբանությամբ, համաձայն որի՝ արտաքին պարտքն ընդգրկում է տնտեսության հատվածների արտաքին բոլոր պարտավորությունները, բացառությամբ ուղղակի ներդրումների (սակայն ուղղակի ներդրումների միջֆիրմային վարկերը ներառվում են արտաքին պարտքի մեջ): Ընդ որում՝ արտաքին պարտքի ցուցանիշները հաշվառված են հաշվապահական հաշվառման կուտակման սկզբունքով:

Գծապատկեր 1. ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքը 2008-2010 թվականներին



ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքը (հիմնականում բաղկացած է ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերից՝ 654.2 մլն ԱՄՆ դոլար և ավանդներից՝ 432.7 մլն ԱՄՆ դոլար) 2010 թվականին ավելացել է 263.7 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել 1135.4 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներգրավված երկարաժամկետ վարկերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 145.2 մլն ԱՄՆ դոլարով, մասնավորապես՝ տարվա ընթացքում ներգրավվել են 347.6 մլն ԱՄՆ դոլար երկարաժամկետ վարկային միջոցներ, իսկ նախկինում ձեռք բերված երկարաժամկետ վարկերի դիմաց կատարվել են 202.4 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարումներ: 2010 թվականի վերջի դրությամբ ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 5.6% (2009 թվականին՝ 5.7%), իսկ միջին ժամկետայնությունը՝ 4.6 տարի (2009 թվականին՝ 4.5 տարի): 2010 թվականին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել Լյուքսեմբուրգը, Ռուսաստանը, Գերմանիան, Ֆրանսիան, Նիդեռլանդները: Զգալի են միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված միջոցները:

Գծապատկեր 2. Մասնավոր հատվածի պարտքային պարտավորությունները 2008 - 2010 թվականներին



ՀՀ այլ մասնավոր հատվածի (առանց առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների) արտաքին պարտքը նախորդ տարվա համեմատ ավելացել է 671.1 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 1711.0 մլն ԱՄՆ դոլար: Պարտքի 36.4%-ը կամ 623.3 մլն ԱՄՆ դոլարը կազմել են միջֆիրմային վարկերը, 56%-ը կամ 958.5 մլն ԱՄՆ դոլարը՝ վարկերը, իսկ մնացած 129.2 մլն ԱՄՆ դոլարը՝ այլ պարտավորությունները,

ներառյալ առևտրային վարկերը: Մասնավոր հատվածի արտաքին պարտքն ավելացել է հիմնականում վարկերի ծավալների աճի հաշվին, որոնք 2010 թվականին կազմել են 958.5 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 581.3 մլն ԱՄՆ դոլար)՝ նախորդ տարվա համեմատ աճելով 64.9%-ով կամ 377.2 մլն ԱՄՆ դոլարով: Զգալի չափով ավելացել են նաև միջֆիրմային վարկերը՝ 78.9 %-ով՝ կազմելով 623.3 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 348.5 մլն ԱՄՆ դոլար), առևտրային վարկերը՝ 23.4%-ով, կամ 14.2 մլն ԱՄՆ դոլարով՝ դառնալով 74.7 մլն ԱՄՆ դոլար (2009 թվականին՝ 60.5 մլն ԱՄՆ դոլար): 2010 թվականին ֆինանսական միջոցներ են ստացվել հիմնականում Ռուսաստանից (35%) ու Նիդեռլանդներից (28%):

Աղյուսակ 1. Մասնավոր հատվածի պարտքային պարտավորությունների կառուցվածքը (ներառյալ բանկերը և վարկային կազմակերպությունները)


մլն ԱՄՆ դոլար

Պարտավորություններ	2008	2009	2010
Ընդամենը մասնավոր հատվածի պարտավորություններ	1864.6	1911.5	2846.4
որից՝			
Վարկեր	1063.3	1045.5	1612.8
Առևտրային վարկեր	10.6	60.5	74.7
Ավանդներ	336.1	382.2	432.7
Միջֆիրմային պարտավորություններ	391.6	355.7	630.9
Այլ պարտավորություններ	63.1	67.5	95.5

Պետական պարտքի ծավալները 2010 թվականին կազմել են ընդհանուր պարտքի 55%-ը, իսկ մասնավորինը՝ 45%-ը: Վերջինս պայմանավորված է 2010 թվականին առևտրային բանկերի և մասնավոր ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից արտաքին պարտքի զգալի ծավալների ներգրավմամբ:

ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին պարտքը 2010 թվականին, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 330.7 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել 3442.1 մլն ԱՄՆ դոլար, ինչը գրեթե ամբողջությամբ ձևավորվել է երկարաժամկետ արտաքին վարկերի հաշվին: ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին վարկերը 2010 թվականի վերջի դրությամբ[3] կազմել են 3299.0 մլն ԱՄՆ դոլար, որից 2736.4 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ Կառավարությանը տրված վարկերն են, իսկ 562.6 մլն ԱՄՆ դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկին:

Գծապատկեր 3. Հայաստանի արտաքին պարտքի կառուցվածքն ըստ գործիքների և վարկառուների (2010 թ. վերջին)



[3] *Արտաքին պետական և պետական երաշխիքով վարկերի վիճակագրության հավաքագրման պատասխանատուն ՀՀ ֆինանսների (ՖՆ) նախարարությունն է: Ընդ որում՝ այս ցուցանիշը հաշվարկվում է հաշվապահական հաշվառման կանխիկ սկզբունքով և ներառում է միայն արտաքին աշխարհից ներգրավված վարկերի փաստացի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը: Նյութում օգտագործված բոլոր ցուցանիշները համապատասխանում են ՀՀ ՖՆ տվյալներին:*

2010 թվականին արտաքին պետական պարտքի ներհոսքը կազմել է 380.4 մլն ԱՄՆ դոլար, որի մոտ 81.6%-ը բազմակողմանի պաշտոնական աղբյուրներից ներգրավված միջոցներն են, մասնավորապես՝ Համաշխարհային բանկից և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամից տարվա ընթացքում ներգրավվել են 92.7 մլն ԱՄՆ դոլարի, Արժույթի միջազգային հիմնադրամից (ԱՄՀ)՝ 182.7 մլն ԱՄՆ դոլարի, Ասիական զարգացման բանկից (ADB)՝ 22.3 մլն ԱՄՆ դոլարի, Նավթ արդյունահանող երկրների կազմակերպությունից (OPEC)՝ 4.0 մլն ԱՄՆ դոլարի և Եվրոպական զարգացման բանկից՝ 8.9 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսական միջոցներ: Համաշխարհային բանկի կողմից գումարները տրամադրվել են հիմնականում «Ոռոգման համակարգի հրատապ վերականգնում»՝ 17.1 մլն ԱՄՆ դոլար, «Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում»՝ 16.8 մլն ԱՄՆ դոլար, «Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում»՝ 12.8 մլն ԱՄՆ դոլար, «Առողջապահական համակարգի արդիականացման ծրագիր (II)»՝ 8.3 մլն ԱՄՆ դոլար, «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման լրացուցիչ ֆինանսավորում»՝ 8.1 մլն ԱՄՆ դոլար՝ վարկային ծրագրերի իրականացման համար: ԱՄՀ կողմից տրված 182.7 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցները տրամադրվել են «Ստենդ-բայ»՝ 73.6 մլն ԱՄՆ դոլար, ECF՝ 56.4 մլն ԱՄՆ դոլար, EFF՝ 52.7 մլն ԱՄՆ դոլար վարկային ծրագրի շրջանակներում: Նավթ արդյունահանող երկրների կազմակերպությունից ստացվել է 4.0 մլն ԱՄՆ դոլար՝ «Շուկայական հնարավորություններ ֆերմերներին» ծրագրի շրջանակներում: Երկկողմանի վարկատուներից տարվա ընթացքում ներգրավված 70.0 մլն ԱՄՆ դոլարի մեծ մասը՝ 66.5 մլն ԱՄՆ դոլարը, ստացվել է Միջազգային համագործակցության ճապոնական բանկի կողմից՝ էներգետիկայի ոլորտի վարկային ծրագրերի շրջանակում և 2.6 մլն ԱՄՆ դոլարը՝ Գերմանական վերականգնման վարկերի բանկի (KfW) կողմից՝ ջրամատակարարման ոլորտների և էներգետիկայի վարկային ծրագրերի շրջանակում:

Հայաստանի Հանրապետությունը, 1992 թվականի մայիսի 28-ին ստորագրելով ԱՄՀ-ի Համաձայնագրի հոդվածները, դարձավ Հիմնադրամի անդամ: Կառավարիչների խորհրդում Հայաստանը ներկայացնում են ՀՀ ֆինանսների նախարարը (Կառավարիչ) և ՀՀ կենտրոնական բանկի նախագահը (Կառավարչի տեղակալ): Տնօրենների խորհրդում Հայաստանը Բուլղարիայի, Կիպրոսի, Իսրայելի, Մոլդովայի, Ուկրաինայի, Սիդեռլանդների, Ռումինիայի, Վրաստանի, Մակեդոնիայի, Խորվաթիայի, Բոսնիա-Հերցեգովինայի հետ միևնույն խմբում է, որի Կառավարիչը ներկայումս Նիդեռլանդների ներկայացուցիչն է:

Հայաստանի բաժնեմասը, սինչև բաժնեմասերի 11-րդ ընդհանուր վերանայումը, կազմել է 67.50 մլն ՀՓԻ, իսկ դրանից հետո (1998 թվականի հունվարի 30) ավելացվել է և այժմ կազմում է 92 մլն ՀՓԻ:

Հայաստանը ԱՄՀ-ի հետ կնքել է 9 վարկային համաձայնագիր: 2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի պարտավորությունները ԱՄՀ նկատմամբ կազմել են 481.0 մլն ՀՓԻ: Ընդ որում՝ 1995 թվականի «Սթենդ-բայ» և ՀԲՖՄ (STF) ծրագրերի ֆինանսական միջոցների հետգնումը ավարտված է: Ընդ որում, բացի 2009 թվականին կնքված «Սթենդ-բայ» և 2010 թվականին կնքված ԸՎԳ (ECF) համաձայնագրերից, բոլոր վարկերը ստացվել են կենտրոնական բանկի կողմից: 2009 թվականին կնքված «Սթենդ-բայ» համաձայնագրով 2010 թվականի ընթացքում ստացված 48.5 մլն ՀՓի գումարի 48.6 %-ը ստացել է կենտրոնական բանկը, մնացած մասը՝ կառավարությունը, իսկ 2010 թվականին կնքված ECF համաձայնագրով 2010 թվականի ընթացքում ստացված 37.4 մլն ՀՓԻ գումարն ամբողջությամբ տրվել է կառավարությանը:

մլն ՀՓԻ

Մեխանիզմների տեսակը	*Համաձայնագրի կնքման ամսաթիվը*	*Գումարը՝ըստ համաձայնագրի*	*Պարտավորությունները 31.12.2010թ. դրությամբ*
ՀԲՖՄ (STF)	*15.12. 1994*	*33.8*	*0.0*
«Սթենդ-բայ»	*28.06.1995*	*43.9**	*0.0*
*ԱՆՏԱ (PRGF) I***	*14.02.1996*	*109.4*	*0.0*
*ԸՎԳ (ECF) II****	*23.05.2001*	*69.0*	*34.2*
*ԸՎԳ (ECF) III****	*25.05.2005*	*23.0*	*22.7*
*ԸՎԳ (ECF) IV****	*17.11.2008*	*9.2*****	*1.3*
«Սթենդ-բայ»	*06.03.2009*	*533.6*	*350.4*
ԸՖԳ (EFF)	*28.06.2010*	*133.4*	*35.0*
*ԸՎԳ (ECF) V******	*28.06.2010*	*133.4*	*37.4*

** Տրամադրվել է ընդամենը 13.5 մլն ՀՓԻ:*

*** Կնքվել է որպես ESAF համաձայնագիր, իսկ 1999 թվականի նոյեմբերի 22-ին վերանվանվել է PRGF:*

**** Կնքվել է որպես PRGF համաձայնագիր, իսկ 2010 թվականի նոյեմբերի 22-ին վերանվանվել է ECF (ընդլայնված վարկային գործիք):*

***** Տրամադրվել է ընդամենը 1.3 մլն ՀՓԻ:*

******Համաձայնագրով սահմանված գումարի 56.1 %-ը Կառավարությանը բաժին ընկնող գումարն է, իսկ մնացած մասը՝ կենտրոնական բանկինը:*

2010 թվականին արտաքին պետական պարտքի հիմնական գումարի մարումները կազմել են 46.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ տոկոսավճարները՝ 44.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համապատասխանաբար 44.7 մլն ԱՄՆ դոլարի և 27.4 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: Արտաքին պետական պարտքի սպասարկման ծավալներից 27.7 մլն ԱՄՆ դոլարը կամ արտաքին պետական պարտքի սպասարկման շուրջ 30.5%-ը կազմել է ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի սպասարկումը, ինչը նախորդ տարի 27.1 մլն ԱՄՆ դոլար էր: Ընդ որում՝ ԱՄՀ վարկերի դիմաց ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ Կառավարությունը վճարել են 8.7 մլն ԱՄՆ դոլար տոկոսագումար և իրականացրել 21.6 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարում:

Նշված հոսքերի արդյունքում 2010 թվականին Հայաստանի արտաքին պետական պարտքի զուտ ներհոսքը (արտաքին պարտքի գծով ներգրավված ֆինանսական միջոցների և վճարված հիմնական գումարի տարբերություն) կազմել է 333.7 մլն ԱՄՆ դոլար, սակայն, պայմանավորված տարվա ընթացքում ՀՓԻ-ի նկատմամբ դոլարի արժևորմամբ (արժևորումը տարեվերջին կազմել է 1.8%), ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքն աճել է ավելի քիչ՝ 332.3 մլն ԱՄՆ դոլարով:

Աղյուսակ 2. ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ արժույթների (%)

Արժույթ	2008	2009	2010
ՀՓԻ	77.1	65.2	63.9
ԱՄՆ դոլար	3.6	20.7	20.2
Եվրո	8.3	5.0	4.5
Այլ	11.1	9.1	11.4

2010 թվականի ընթացքում ՀՓԻ նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի արժևորման հետևանքով Համաշխարհային բանկից (ներառյալ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը) և ԱՄՀ-ից ՀՓԻ-ով ներգրավված պարտքը համապատասխանաբար նվազել է 21.9 մլն ԱՄՆ դոլարով և 13.3 մլն ԱՄՆ դոլարով՝ նախորդ տարվա 21.4 մլն ԱՄՆ դոլար և 10.3 մլն ԱՄՆ դոլար աճի փոխարեն (2009 թ-ին ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՓԻ նկատմամբ արժեզրկվել էր), իսկ եվրոյի նկատմամբ դոլարի փոխարժեքի արժևորման հետևանքով Գերմանիայից, Ֆրանսիայից և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից եվրոյով ներգրավված պարտքը նվազել է 13.0 մլն ԱՄՆ դոլարով՝ նախորդ տարվա 0.2 մլն ԱՄՆ դոլար նվազման փոխարեն: Փոխարժեքների տատանման հետևանքով արտաքին պարտքը նվազել է 11.7 մլն ԱՄՆ դոլարով: Նշենք նաև, որ հիմնական արժույթների նկատմամբ ՀՀ դրամի արժևորման արդյունքում դրամային արտահայտությամբ նվազել են ինչպես Կառավարության արտաքին պարտքի սպասարկման ծախսերը, այնպես էլ ներգրավված վարկերի ծավալները:

Աղյուսակ 3. ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի կառուցվածքը

Աղբյուրը	2008		2009		2010	
	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)
Բազմակողմ	1234.7	78.3	2013.9	67.9	2253.7	68.3
Համաշխարհային բանկ և Գյուղ. զարգ. գործակալություն	1076.9	68.3	1274.3	43.0	1327.5	40.2
ԱՄՀ	134.8	8.5	586.7	19.8	740.8	22.5
Եվրոպական բանկ (առանց երաշխիքի)	-	-	1.3	0.04	10.0	0.3
Նավթ արդյունահանող երկրների կազմակերպություն (OPEC)	15.0	1.0	25.0	0.8	28.7	0.9
Ասիական զարգացման բանկ (ADB)	8.1	0.5	126.5	4.3	146.7	4.4
Երկկողմանի	342.4	21.7	952.8	32.1	1045.3	31.7
ԱՄՆ	32.8	2.1	31.1	1.0	29.4	0.9
Գերմանիա	125.3	7.9	142.7	4.8	132.7	4.0
Ֆրանսիա	5.0	0.3	4.8	0.2	4.3	0.1
Ճապոնիա	174.9	11.1	270.6	9.1	374.4	11.3
Ռուսաստան	-	-	500.0	16.9	500.0	15.2
Աբու-Դաբիի զարգացման հիմնադրամ	-	-	0.0	0.0	0.9	0.0
Լինսի հիմնադրամ	4.4	0.3	3.6	0.1	3.7	0.1
Պետական երաշխիքով վարկեր	-	-	-	-	-	-
Ընդամենը	**1577.1**	**100**	**2966.7**	**100**	**3299.0**	**100**

Նախորդ տարվա համեմատ պարտքի ներկա արժեքն աճել է՝ կազմելով 3098.1 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 2801.6 մլն ԱՄՆ դոլար): Այս աճը պայմանավորված է միջազգային տոկոսադրույքների[4] նվազմամբ[5], ինչպես նաև մի շարք նոր վարկերի ներգրավմամբ, որոնք տրամադրվել են արտոնյալության ցածր պայմաններով՝ բարձր տոկոսադրույք, մարման կարճ ժամանակահատված և այլն (մասնավորապես՝ ԱՄՀ-ից՝ 133.4 մլն ՀՓԻ վարկը, Գերմանիայից՝ 30 մլն եվրո և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից՝ 5 մլն եվրո վարկերը):

*Աղյուսակ 4. ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի տրամադրման պայմանները**

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010
Տոկոսադրույք (%)	0.8	0.8	1.2	1.3
Մարման ժամկետ (տարի)	33.2	33.7	26.7	25.5
Գրանտ-էլեմենտ (%)	58.5	55.3	39.3	31.4
Արտոնյալ վարկեր (% ամբողջ պարտքի մեջ)	99.0	99.0	52.3	61.9
Հաստատագրված տոկոսադրույքով վարկեր (% ամբողջ պարտքի մեջ)	99.6	99.7	65.4	63.6

** Հաշվարկված են միջին կշռված ցուցանիշների հիման վրա:*

Երկրի արտաքին պարտքի ցուցանիշի վերլուծության ու պարտքի բեռի գնահատման համար արտաքին պարտքը սովորաբար դիտարկվում է մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների հետ հարաբերության մեջ: Արտաքին պարտքի հարաբերական ցուցանիշները արտաքին պարտքի սպասարկման հետ կապված հնարավոր ռիսկերի բնութագրիչներ են: Այդ ցուցանիշների միջոցով գնահատվում է երկրի վճարունակության և իրացվելիության մակարդակը, ինչը նպաստում է արտաքին պարտքի արդյունավետ կառավարմանն ու առկա խնդիրների ժամանակին բացահայտմանը: Արտաքին պարտքի բեռի գնահատման համար Համաշխարհային բանկն օգտագործում է արտաքին պարտք/ՀՆԱ, արտաքին պարտքի ՆԱ/ՀՆԱ, արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում, արտաքին պարտքի ՆԱ/ապրանքների և ծառայությունների արտահանում հարաբերությունները:

Աղյուսակ 5. Արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշները և դրանց թույլատրելի սահմանները

Ցուցանիշներ	Պարտքի ծանր բեռ	Պարտքի միջին բեռ	Պարտքի թեթև բեռ
Արտաքին պարտքի ՆԱ/ ապրանքների և ծառայությունների արտահանում	220%-ից բարձր	132-220%	132%-ից ցածր
Արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում	275%-ից բարձր	-	-
Արտաքին պարտքի ՆԱ /ՀԱԱ	80% -ից բարձր	48-80%	48% -ից ցածր
Արտաքին պարտք /ՀՆԱ	50%-ից բարձր*	-	-

** Այս ցուցանիշի գծով Համաշխարհային բանկն ունի միայն առավելագույն սահման:*

Արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշների հաշվարկի համար Համաշխարհային բանկը, բացի պարտքի ՆԱ-ից, օգտագործում է նաև պարտքի անվանական ծավալները, քանի որ մի շարք երկրների արտաքին պարտքի ՆԱ-ն հնարավոր չէ հաշվարկել արտաքին պարտքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության բացակայության պատճառով:

Աղյուսակ 6. ՀՀ արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշները 2008-2010 թթ.

Ցուցանիշներ	2008	2009	2010	Միջին (2008-2010)
Արտաքին պարտք / ապրանքների և ծառայությունների արտահանում	195.99	375.31	324.66	298.65
Արտաքին պետական պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում	89.86	232.48	177.70	166.68
Արտաքին պարտք/ՀՆԱ	29.60	60.42	65.27	51.76
Արտաքին պետական պարտք/ՀՆԱ	13.57	37.43	35.73	28.91

[4] Արտաքին պարտքի ՆԱ հաշվարկման ժամանակ որպես գեղչման տոկոսադրույք սովորաբար օգտագործվում է CIRR տոկոսադրույքը: Այս տոկոսադրույքները հաշվարկվում և հրապարակվում են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից:

[5] Եթե նախորդ տարվա նկատմամբ տոկոսադրույքները մնային անփոփոխ, ապա արտաքին պարտքի ՆԱ-ն 2010 թվականին կկազմեր մոտ 2909.2 մլն ԱՄՆ դոլար:

Այսպիսով, 2010 թվականին արտաքին պարտքի իրացվելիությունը գնահատող արտաքին պարտքի և ապրանքների ու ծառայությունների արտահանման հարաբերակցությունը բավականին բարձր է, ընդ որում՝ այս ցուցանիշը, սկսած 2009 թվականից, գերազանցել է միջազգայնորեն ընդունված սահմանաչափը: Դա պայմանավորված է մեծածավալ պարտքի կուտակմամբ: Իսկ եթե արտահանման ոչ մեծ ծավալներից բացառենք նաև վերաարտահանումը (մշակված ադամանդը, որի արտահանումը չի դիտվում որպես ամբողջությամբ արտահանումից հասույթ), ապա կստացվի, որ իրացվելիության տեսանկյունից Հայաստանը այնքան էլ բարենպաստ վիճակում չէ:

Արտաքին պարտքի կայունությունը գնահատող մյուս ցուցանիշը՝ արտաքին պարտք/ՀՆԱ, 2010 թվականին, նախորդ տարվա համեմատ, վատթարացել է: Հակառակ միտումն է նկատվել պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշում: Վերջինս վկայում է այն մասին, որ, ի տարբերություն նախորդ տարիների, 2010 թվականին արտաքին պարտքի աճի մեծ մասը բաժին է ընկել մասնավոր հատվածի պարտքին:

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2011

Երևան - 10, Վ. Սարգսյան 6. http:// www.cba.am